

Բաժանորդագրին կԱՆԻՍԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու- թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ' կ'ընդունուի 1 դրշ.նոցը 31 փարայի հաշ- ւով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դրշ:

ԵՄԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար գիմել

Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ Պոլիս, Պահչէ-Կաթու, Թաշ խան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاند
•• نومروده « زاغيك » غزتهسى مديرى
بالاقاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

Նոր Շրջան — Բ. ՏԱՐԻ. ԹԻ 18

Շ Ա Բ Ա Թ

15 ՓԵՏՐՈՒԱՐ 1892

Գ Ր Ա Ս Ե Ն Ե Ա Կ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԵՄԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն խնդրանաց զորս յաճախ կ'ընդունի, հաստատած է Յանձնակատարութեան Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանա- կութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հը- րապարակներէն գնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և գրասենեակի պիտոյք, ժամացուցի, տպարանական և այլ արհեստական գործիք, կտաւեղէնք, ասուեղէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կըր- նան արտադրիչներն ապահովել. ֆո- խադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներ- քին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օ- տար հրապարակաց վրայ. Առ այդ- կը բաւէ զրկել վաճառելի ապրա- նաց նմոյշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղ- ղուին առ Յ. Գ. Փալաքաշեան, Կ. Պոլիս, Պահչէ գաթու, Թաշ խան, քիւ. 50:

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲԱՒԱԻՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՀԱՄԱՅՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐԿԻՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ԵՒ ԵՂԻՊՏՈՍԻ ՄԵՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈԼՏԵՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման կրնայ դիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբ, պատրաստութեան տոկունութեամբ, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կտրուածքովը:

ՊԼԱՄԱՌՈՐ ՄԹԵՐԱՆՈՅՔ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, եւ Քարաքէօյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Գ

Հռոմոս, Քափալա, Ռուսուք, Ջմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ, Բոր-Սաիտ, Սելանիկ, Սամոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ, Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանտրիա, Գահիրէ, Էսյէն, Էսյէն:

PAPETERIES DE VIDALON

Թ Ղ Թ Ե Ղ Ի Ն Ա Ց

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին յ'Աննօնէ

Դրամագլուխ 3,150.000 Փրանք.

Կ'արտադրէ տարին 3,000.000 քիլօկրամէն աւելի

Ներկայացուցիչ Հանրի Ժարտօն, Պարնաթան խան



Գրասենեակի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրու- թեան թուղթ սալտակ և զանազան գոյներով, ծծուն թուղթեր, զանազան տեսակ ստուարաթղթեր (մուխափա), լուսանկարչական թուղթեր, մագաղա- թանման թուղթեր, նամակաց պահարաններ, և այլն, և այլն:

«ԵՄԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի վրայ: — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել «ԵՄԱՂԻԿ» ի խմբագրատունը:

A black and white illustration of a man with a mustache, wearing a patterned suit jacket, a patterned vest, a white shirt, and a bow tie. He is standing with his hands at his sides.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ,

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

242.

Շապիկի կտաւեայ	Հատը	14	էն	47 ¹ / ₂
» գունաւոր տպածոյ	»	10	էն	28
» Փանէլա	»	21	էն	42
» գիշերանոց	»	12	էն	27
Անդրապարտիկ	»	10	էն	21
» մատամբօլ	»	15	էն	22
Օձիք կտաւեայ	տուզինան	17	էն	54
Թեւնոց »	»	29	էն	65
Թաշկինակ այլ և այլ տեսակ	»	14	էն	135
Գուլպաներ՝ ֆիլ տիէքօս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ . .		29	էն	145
Փողկապ այլ և այլ տեսակ	տուզինան	3	էն	19

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ .

2nd :

Շապիկ՝	լաւ տպածոյ ,	դիմացկուն ,	պրօտըրիով	հատը	15 էն	27
»	»	»	տանթեւայով	»	18 էն	31
Վարտիկ	»	»	»	»	14 էն	22
Վարտիկ	»	»	պրօտըրիով	»	11 էն	24
Միսօ	»	»	»	»	20 էն	38
»	»	»	տանթեւայով	»	25 էն	65
Քօրսէ՝	Բարիգի	Կուրտէ	գործատան	»	26 էն	70
Քօրսաժ	Բամպակեայ ,	մետաքսեայ		»	11 էն	26
Ֆանէլա	լաւագոյն	տեսակէն		»	15 էն	40

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստերէնք և ճերմակերէնք :

272.

Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեռոցով	20 է՝ 39
» » գունաւոր 6 և 12 »	65 է՝ 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը	9 է՝ 17
Դուլայ՝ ֆիւտէքսի, բրդեայ, բամպակեայ տուզինան	40 է՝ 145
Կտաւ վիշիի, մէթրը	3 է՝ 5
Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն	2 է՝ 5 1/2
Եւ ուրիշ ամէն տեսակ ապրանքներ	

Յանձնարարութեանը հաճար պէտք է գրել «Ծաղիկ»ի Յանձնակատարութեան Գրասենեակին :

10—52

Unglück, moßig,

212427

Ի Պոլիս, Սուլթան Պալատին,

66 74.0 ' 2720th 0-717620-43

[illegible]

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎ, ԱԳՐԱԿԱՆ, ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱՅ ԼԵՈՅ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ
Կառավարութեան

ԿԵԴՐՈՆԱՍԻՆՈՒՆԻՔ 61, ԲՆՓԻԼԱՍԼԻՔ ՎՈՂՈՅ՝

Հիտն (Ֆրանսա)

ሀገራችን የሥራ ስፋት ለ 100,000 000 \$ ያድርጋል

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԻ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԻԻՆՆ, որ հաստատուած է նպաստե-
լու համար փոքր խնայողութեանց, ա-
րագ զարգացում մը ունեցած է: Իւր
նպատակն է որոշեալ պայմանաժամի
մէջ վերահազմել գրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնք բազմագլիմի են , ինչպէս շարժական արժէից և փոխ տրուած դրամագլխոց ապահովագրութիւն , կորուսեալ դրամագլխոց մը վերակագմութիւն : Երաշխաւորութիւնք և Գլխավճարք՝ փոխառութեանց և ճարտարութեանից և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց , մանկանց համար օժիտք , հանգստեան սնտուկ ծերութեան համար , ցկեանս եկամուտներու կազմութիւն , ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն : Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն :

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղէֆէնտի Թէլլաբեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պազնէ—Գարու, Շէյխ—իսլամ խան, Թիւ 11 :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ

Բաւարան Զբօնօրէն Հայ-աշխարհիկ,
ի Մետրոպ Նուպարեանէ . Դին 20 Քր :
Առտնին Տնտեսութիւն , Մ . Մա-
մուրեան . Դին 8 զրուշ :

Առաջնորդ փրկութեան, Գրեց Գա-
րիէլ Քահանայ Կիւրէի. Գին 5 ղրշ:

ՄԵՏԵԼԵՅԻ անդամը Սյուլիյէ . Օ-Ֆա-
հառն Կապապէն Օրէն-ճիւր . Թարգ . Նիկ .
Թոթվայեան . Հինդ Հատորներու բաժ-
նուած , իւրաքանչիւր Հատորի գինն է
10 զրուշ :

Մայր՝ ցուցակ Հայերէն ձեռագրաց
Կայսերական մատենադարանին ի Վի-
եննա . Մխիթարեան Միաբանութենէ .
Գին 10 զրուշ :

Ույն գիրքերը գաւառներէն ստա-
նալու համար դիմել ՎՊաղկիի Խմբա-
գրութեան :

Բաժանորդագիրն կԱՆՆԻՆԻ Թուրքիոյ Համա-
տարեկան 50 զրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի,
ուրիշ երկիրներու Համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-
թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան Նամակագրոշմ'
կ'ընդունուի՝ 1 զրշ, նոցը 34 փարայի հաշ-
ւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

Եւրոպայի վերաբերեալ ամէն գործի համար
դիմել

Առ Տնօրէն-Հրատարակիչ
Յովնան Պալակաչիան
Պալիս, Պահչէ-Գաբու, Թաշ Խան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاند
• • نومروده « زاغيك » غزته سى مديرى
بالا قاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghih»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 18

ՇԱԲԱԹ

15 ՓԵՏՐՈՒԱՐ 1892

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

Գ Ր Ա Պ Ի Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն (1)

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի
«Ամուսնական խնդիրներ» գրքին
վրայ,

ի Բժիշկ Միսաք Արամեանէ

Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ չհա-
սութեան խնդիրը իւր վերջնական ո-
րոշումը կ'ստանայ 1243 թուականին
կոստանդին կաթողիկոսի օրով Սսի ժո-
ղովի մէջ, Զպտակն ընտրութեամբ ա-
րասցեն, վեց ծննդով անուանեալ յազ-
գակցութեան արեան: Այս ժողովի կանո-
նը խիստ պարզ է՝ — եօթն աստիճան
պորտ հաշուել եւ պահելուց յետոյ վե-
ցերորդ աստիճանի մէջ թողնել: Այս
կանոնի զօրութիւնն այսօր մեր եկեղեց-
ւոյ մէջ ամէն տեղ կը պահպանուի եւ
ժողովուրդն այնքան իւրացուցել է նո-
րա պարտաւորիչ ոյժը, որ համազգա-
յին աւանդութիւն է դարձած հայ ժո-
ղովուրդի մէջ եօթն պորտ խօսքը, որ
անիծից եւ հայհոյութեանց մէջ կ'ակ-
նարկուի իբր նոր ամուսնութիւն:

Այսպէս՝ ըստ Հայաստանեայց եկե-
ղեցւոյ՝ ամուսնական հասի-չհասի վե-
րաբերեալ կանոնադրութիւնները պատ-
մութեան մէջ երեւան են եկած Աշտի-
շատի, Շահապիվանի, Դուինի Բ. Աբ-
րահամ կաթողիկոսի (որ հաւանակա-
նաբար Դուինի Բ. ժողովին (606) չը
պատկանիր), եւ Սսի ժողովոց կանոնա-
կան սահմանաց մէջ. սոքա բոլորն ալ՝
ժամանակի համեմատ՝ ժողովուրդի մէջ
արմատացած հեթանոսական սովորու-
թիւնները մի առ մի խլելով, Աստուա-
ծաշունչ Գրոց սահմաններու ճիշդ գոր-
ծադրութեանն են հասել: Դոցա կա-
տարեւագործութեան աստիճանները բա-
ցայայտ պատկերացներու համար այս-
պէս կարելի է դասաւորել:

Ա. Աշտիշատի ժողովը, 365 թուա-

(1) Շար. «Ծաղիկ» Նախորդ թիւէն:

կանին: Լուսաւորչի, մանաւանդ Տրդա-
տի մահէն յետոյ՝ մեծամեծները կը
դառնան հեթանոսական սովորութեանց
եւ այդ սովորութեամբ կ'սկսին շարու-
նակել խնամութիւն ընել այնպիսի մեր-
ձաւոր ազգականաց հետ, որ Ս. Գիրքն
իբրեւ ազգապղծութիւն եւ ամբարշտու-
թիւն կը դատապարտէ: Ներսէս Մեծի
նախագահութեամբ Աշտիշատայ ժողովը
կանոնական սահմանով կ'օրինադրէ՝ հե-
ռի կենալ այնպիսի ամուսնութեանէ որ
Աստուծոյ առաջ ամբարշտութիւն է:

Բ. Շահապիվանի ժողովը 447 թուա-
կանին: Մինչեւ այդ ժողովը՝ Հայք ա-
մուսնութեան միջոցին կ'զգուշանային
Ս. Գրքի որոշած սահմանաց համեմատ.
օրինակ՝ ըստ օրինաց՝ արգելուած էր
հօրաքրոջ կամ մօրաքրոջ հետ ամուս-
նանալը, իսկ դրանց անմիջական ծը-
նունդի հետ՝ ներելի էր: Շահապիվանի
ժողովը այդ բանը կ'արգելէ, եւ այս-
պէս Ս. Գրոց նշանակած սահմանը մի
մի աստիճանով կը կատարեւագործուի՝
ի հարկէ բաց ի բարոյական պատճառէ՝
եւ այն հայեացքով, որ քանի հեռաւոր
ազգականի հետ ամուսնանան, այնքան
սերունդը ուժեղ, տոկուն եւ շատուր կը
լինի:

Գ. Դուինի ժողովը 527 թուականին
կը կատարեւագործէ Շահապիվանի սահ-
մանադրութիւնը, մի աստիճան եւս հե-
ռացնելով ներելի սահմանը: Շահապի-
վանի կանոնով հօրաքրոջ կամ մօրաքրո-
րոջ դուստրը կին չ'ը կարելի առնել.
կարելի էր նոցա դստեր կամ դստեր
դուստրն՝ թոռն՝ առնել: Դուինի ժո-
ղովը մի աստիճան վեր կը տանի, այ-
սինքն հօրաքրոջ կամ մօրաքրոջ թոռը
կին չ'է կարելի առնել. ներելի է թո-
ռան աղջիկը:

Դ. Աբրահամ կաթողիկոսի կանոնա-
դրութիւնը նոյնպէս մի աստիճան կը
հեռացնէ. հօրաքրոջ կամ մօրաքրոջ թո-
ռան աղջիկը չ'է կարելի կին առնել.
ներելի է թոռան թոռը:

Ե. Նոյնն է Սսի ժողովի տրամադ-

րութիւնը: Աւելորդ չ'է պատկերացնել
այստեղ այդ ժողովոց արգելած եւ նե-
րելի ճիւղադրութիւնը:

Ա. Ճիւղադրութիւն Ս. Գրոց առ
Մովսիսի.

Արգիլեալ.

Ներելի.

1. փեսացու.
2. հայր կամ
մայր սորա.
3. քոյր սորա՝
հարսնացու.

1. փեսացու.
2. հայր կամ
մայր սորա.
3. քոյր սորա.
4. դուստր սորա՝
հարսնացու.

Բ. Ճիւղադրութիւն Շահապիվանի
ժողովոյ

Արգիլեալ.

Ներելի.

1. փեսացու.
2. հայր կամ
մայր սորա.
3. քոյր կամ
եղբայր սորա.
4. դուստր.

1. փեսացու.
2. հայր կամ
մայր սորա.
3. քոյր կամ
եղբայր սորա.
4. դուստր կամ
ուստր սորա.
5. դուստր սո-

Գ. Ճիւղադրութիւն Դուինի ժողո-
վոյ.

Արգիլեալ.

Ներելի.

1. փեսացու.
2. հայր սորա
կամ մայր.
3. քոյր սորա
կամ եղբայր
4. դուստր կամ
ուստր սորա.
5. դուստր սորա.

1. փեսացու.
2. հայր կամ
մայր սորա.
3. հայր սորա
կամ մայր.
4. քոյր սորա
կամ եղբայր.
5. դուստր սորա
կամ ուստր
6. դուստր սորա՝
հարսնացու.

Դ. Ճիւղադրութիւն Աբրահամ կա-
թողիկոսի.

Արգիլեալ.

Նիւրելի.

1. փեսացու.
1. հայր սորա.
3. հայր սորա.
4. քոյր սորա.

1. փեսացու.
2. հայր սորա.
3. հայր սորա.
4. քոյր սորա.

5. դուստր սորա՝ 5. դուստր սորա
6. դուստր սորա՝ 6. դուստր սորա
հարսնացու. 7. դուստր սորա

Ե. Նոյնն է Սսի ժողովի ձեռագրերու թիւերը:

Ծանոթութիւն. Պարտաւի ժողովի կանոնը պիտի բացառուի ինչն համարինք, որպէս օրինադրութիւն միայն Աղուանից ժողովուրդի համար:

Հասի խնդրի մասին իսկապէս մեր «Նշմարներ» ունէ այստեղ հարկ էր վերջ տալ՝ աւելի մանրամասն տեղեկութիւն կամեցողներու հ. Բաստամեանցի մանրագնին խուզարկութիւնը ցոյց տալով, բայց խնդիրը լրութեամբ պարզած չէինք լինել, եթէ արիւնակից չհասուի թեան մասին մեր խօսքը աւարտելէ յետոյ՝ խնամական չհասութեան վերաբերմամբ մեր եկեղեցւոյ օրէնսդրութիւնը համառօտաբար չորոշէինք: Սա կարեւոր է նորա համար, որ այս կողմէն չհասութեան խնդիրը՝ զանազան տեղեր՝ զանազան անձանց տարբեր հայեացներու և ըմբռնողութեան առարկայ կը լինի և գրեթէ այս մասին եղած տըրտունջները միշտ յառաջ կուգան հայեացքներու և օրինաց ըմբռնողութեան տարբերութենէն:

Ղևոնական գրոց ԺԸ. 17 և 18 թերթերութիւններով՝ ըստ մեկնութեան Բարսեղ Կեսառացւոյ և Աբրահամ Կաթողիկոսի՝ եկեղեցին խնամութիւնը ազգակցութեան հաւասար է համարած ի վաղուց անտի: Այս հաւասարութիւնը ըստ կանոնի նախնիք այսպէս կը համարին. օրինակ՝

Ա. 1. Ներսէս՝ Իեսացու. 2. Հայր սորա՝ Վահան. 3. Եղբայր սորա՝ Յովսէփ. 4. Կին սորա՝ Շուշան. 5. Քոյր սորա՝ Վարդուհի. 6. Դուստր սորա՝ Աննա. 7. Դուստր սորա՝ Աղանիս: Եթեանքորդ աստիճան խնամութեան հաս է արդի սովորութեամբ:

Բ. 1. Ներսէս Իեսացու. 2. Հայր սորա Վահան. 3. Եղբայր սորա Յովսէփ, և կին սորա՝ Շուշան. 4. Քոյր սորա՝ Վարդուհի. 5. Դուստր սորա՝ Աննա. 6. Դուստր սորա՝ Աղանիս:

Սոյն հաշուոյ մէջ այս ձեռագրութիւնը վեցերորդ աստիճան է, բայց երկուքն եւս մի և նոյն աստիճանի են. վերջին ձեռագրամարի մէջ այր և կին՝ Յովսէփ և Շուշան՝ որպէս մի մարմին համարուելով, Ա. օրինակի 3 և 4 աստիճանները կը միացնեն, որով հարսնացուն կը դառնայ վեցերորդ աստիճան. բայց մի և նոյն ժամանակ այսպէս համարողները, եթէ կատարեալ հմտութիւն ունին, Ա. օրինակի կերպով հաշուողներու հետ համաձայն են և իրրեկ կանոն կ'ընդունին թէ արեւակից ազգականներէն եթեանքորդ աստիճանը,

պորտը հաս է, իսկ խնամական ազգակցութենէն վեցերորդ աստիճանը հաս է:

Այս Բ. օրինակ համարողութեան ձեւը, որ սովորաբար այժմ ընդհանուր է Թուրքիոյ Հայոց մէջ, մի ուրիշ պատահմունք ունի. երբ խնամիք կը միանան, այսինքն խնամին խնամին հարս կ'առնէ, կրկին խնամութիւն օրինակ:

1. Փեսացուն՝ Ներսէս. 2. Եղբայր սորա՝ Հայկ. Կին սորա՝ Հեղինէ. 3. Եղբայր սորա՝ Աշոտ. Կին սորա՝ Մարգարիտ. 4. Մայր սորա՝ Շուշան. 5. Քոյր սորա՝ Տիրուհի՝ հարսնացու:

Կրկին խնամութեան հինգերորդ աստիճան հաս է. եթէ այս ձեռագրամարը ըստ նախնեաց հաշուենք և նշանագրենք, եթե աստիճան կը համարուի, որովհետեւ երկու կանայք՝ Հեղինէ և Մարգարիտը՝ որ 2 և 3 աստիճաններու մէջ միացած են իրենց այրերու հետ, զատ զատ աստիճաններ, պորտ պիտի առնուին: Ի հարկէ՝ թէ՛ նախնեաց և թէ՛ արդի սովորութիւնը բոլորովին մի և նոյն է: Անհմուտ գործակալներն են, որոնք անգիտութեամբ, բայց առաւել շարամուտութեամբ, այս ձեռագրութիւնը, որպէս հինգերորդ աստիճան՝ չհաս կը համարին:

Սեղրակեան Սրբազանը, չհասութեան վերաբերեալ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնադրութեան կատարելագործութեան պատմական պատկերը ներկայացնելով և դորա աստիճանները երկու աղիւսակոց մէջ ամփոփելով, իւր աշխատութեան Ե. 2. գլուխներու մէջ կը ներկայացնէ մի քանի չը հասական խնդրոց գրաւոր վճիռներ՝ արձանագրութիւններէ հանած: Այդտեղ Ս. հեղինակի նպատակն է ցոյց տալ, թէ ինչպէս զանազան ատեաններու մէջ կամ մի և նոյն ատեանի մէջ զանազան ժամանակ մի և նոյն խնդիրը զանազան կերպով է վճռուած և կը վճռուի և անլուր գայթակղութեանց պատճառ է եղած:

Սեղրակեան Սրբազանը այդ սպառնացող չարեաց առաջը փակելու և գայթակղութիւնը բառնալու միակ միջոցը կը համարի մի նոր կանոնադրութեան անհրաժեշտութիւնը:

Ս. հեղինակի ներկայացուցած ատեանական գրաւոր վճիռներու մասին այսքան կ'ըսենք թէ՛ ով որ քիչ թէ շատ ծանօթութիւնն ունի կանոնագիտութեան օտար գրականութեան, նա անշուշտ կը համաձայնի մեզ հետ, որ այդ բերուած օրինակներէն ոչ մինը մեկնաբանական առանձին կարեւորութիւն չունի. դժբա այն կարգի բաներ են, զորս վասն անառակ բնութեան իսկ, ինչպէս Տակիտոսը կ'ըսէ, ծածկէ գիշեր ի խաւարի: Կասկած չկայ, որ Սեղրակ-

եան Սրբազանը այդ օրինակները մէջ է բերած ոչ այն մտքով, որ դժբա կանոնագիտութեան համար մի որ և է նշանակութիւն ունին, այլ եկեղեցւոյ մարմինը կեղեքող վէրքերը մերկացնելու նպատակով, — կատարուող եղծումները նշաւակելու և յանդիմանելու դիտաւորութեամբ: Եթէ արդարեւ սո էր Սեղրակեան Սրբազանի նպատակը, հազիւ թէ այս կողմէն մի առանձին ծառայութիւն քած է իւր արգահատած եկեղեցւոյն: Այդ մասին մենք գրականութենէն և կեանքէն աւելի շատ բան գիտենք, քան թէ Սեղրակեան Սրբազանի ընծայաբերութիւնն է: Եկեղեցականի համար այդ տեսակ գայթակղիչ բառերու յանդիմանութեան մերկացման բնավայրը հոգեւոր ատենակալներու և տեսուչներու խորհրդարանն է, քան թէ ամբողջ գաղութեան լեզուագրութեան հրապարակը...

Եթէ այդ մերկացումը կեղեքող վէրքի բուժման համար է, շատ օտարոտի է, որ այդ տեսակ վէրքերու բուժման համար այդպիսի եղանակ ի գործ կը դրուի: Բժշկական օրէնք է. երբ ապաքինելու համար հարկ լինի մերկացնել ամօթանքը, որ «վասն անառակ բնութեան» առակ բնութիւնը միշտ ծածուկ կը պահէ, կը մերկացնեն մեկուսի կողմնակի հայեացքէն, ախտածիտի երեսն անգամ քօղարկելով: Կը մերկացնեն և կը դարմանեն՝ պատկառելով և արգահատելով: Այսպէս է գոնէ աշխարհիկ բժշկականութեան կանոնը. կը կարծենք որ տարբեր չէ հոգեւոր բժշկականութեան օրէնքը: Ամէն բան կարելի է, բայց ոչ ամէն բան օգուտ, կ'ըսէ առաքեալը: Ի՞նչ օգուտ Սեղրակեան Սրբազանի յանդիմանութիւններէն. — լոկ նշաւակութիւնը, բայց սա արդէն վաղուց է որ մամուլը կատարած է: Սեղրակեան Սրբազանի նշման եզակի դրութիւն ունեցող մի բարձրաստիճան անձի խմտութիւնը այս կողմէն աւելի պիտի լինի, քան թէ հասարակ մահկանացուաց ըմբռնողութիւնը: Որով շատ տուաւ՝ շատ խնդրեցի ի նմանէ: Եւ որպէս զի այդ եզակի դրութեան մէջ գտնուող անձի հեղինակութիւնը պահպանուի, պէտք է որ նորա արդարութիւնը աւելի լինի քան թէ աշխարհիկ գրողներու արդարութիւնը: Կ'ուզէինք խմանալ, թէ արդեօք նա ներկայացուցած է՞ այս մասին հոգեւոր ծայրագոյն իշխանութեան, Արդեօք իւր պարտաւորութեանց ժամանակ մի շրջաբերական հանած է՞ ի յորդոր ժողովրդեան և ի հրահանգութիւն քահանայից...

Եթէ վաղուց վերահասու է եղած վրտանգին՝ —ինչո՞ւ իւր բողոքը պահած է՝

այն ժամանակ, երբ ազդարարութեան աւելի հարկաւորութիւն կար. — երբ օրինազանցութիւնը հոգեւոր վարչութեան բոլոր մասերու մէջ անսպասկառութեան էր հասած և կրօնի սրբութիւնները հրապարակով աճուրդ էին հանուած... Այս հարցերը գուցէ շատ փափուկ հարցեր են և կը դաշին մեր Ս. հեղինակի շատ զգալի թելերուն. բայց թող չկարծուի՝ թէ ասոնք լիկ պարապ հարցասիրութեան հաճոյք են։ Այս հարցերու շխտակ ու անկեղծ պատասխանը Սեդրակեան Սրբազանի աշխատութիւնը ըստ արժանւոյն գնահատելու համար աւելի նշանակութիւն ունի, քան թէ Մոզզեկի ուխտաւորներու պատճառով խեղճ կրօնաւորի կըրած տառապանքի առատակը... Առաջ էր, որ կրօնաւորը կը յանդիմանէր աշխարհականը թէ խօսքդ խօսք չէ, բայց բանդ առասպել է։ Այժմ ժամանակը փոխուած է և իրերն ալ հետը։ Այդ խեղճ կրօնաւորին մի պատասխան ունինք. մեզմէ անմեղը թո՛ղ քարը նետէ։ Ով չէ՛ կցուած մանկուհական կամ մապաշտութեան և ինքն անհաղորդ է այս և այն կերպով սխմանականութեան, ազնիւ է։ Բայց եթէ Սեդրակեան Սրբազանը կը կամենայ մեզ հաւատապարտել որ նորա նկարագրած խեղճ կրօնաւորի արհիւական խոյրը և մատանին պարգէն է ի վարձ աշխատութեան և ոչ ի գին գնոց արծաթի, ունայն է աշխատութիւնը։ Ամենեքեան խոտորեցողք ի միասին և անսխմանացաք և ոչ ոք է որ առնէ զբարի. եթէ զՄովսիցիս կոչես դիւազգեստս, ես զԱստանեանս կոչեմ կնամարդիս... (1)

(1) Ակնարկութիւնը կը հասկնամք, վասն զի գիտեմք որ Սեդրակեան Արիստակէս իւր եպիսկոպոսութիւնը Մանկուհի Սրբազանին կը պարտի։ Գէորգ Կաթողիկոսի կատարած վերջին ձեռնադրութեանց ժամանակն էր որ Սեդրակեան ևս ձեռնադրուեցաւ։ Գէորգ Կաթողիկոսի ծերացած, մարմնով շատ տկար, հիւանդագին օրերուն մէջ տեղի ունեցան այդ ձեռնադրութիւնք։ Երջանկալիչապէս Կաթողիկոսը չէր ուզած ընդունիլ Մանկուհի սրբազանի առաջարկութիւնը և Սեդրակեանի պէս մարդու մը վրայ ձեռք դնել, բայց չը կարենալով դիմադրել Մանկուհի Սրբազանի ստիպմանը, միւս եպիսկոպոսաց հետ զՍեդրակեան ևս ձեռնադրած էր, բոլորովին ակամայ, բռնութեան ներքեւ։

Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոս՝ իւր Իմբէթի և Վրաստանի թեմին Առաջնորդութիւնն ևս կը պարտի Մանկուհի Սրբազանի բարեկամութեան։ Թէ ի՞նչով ձեռք կը բերուէր այդ բարեկամութիւնը, այդ մասին պէտք է հարցաւորուէր Կովկասի Հայերը։

Ծ. Խմբ. «Ծաղիկ»ի

Իւմ իմաստասէրը մի խօսք ըսած է զոր չեմ կարող մէջ չբերել այստեղ. այս խօսքը կը վերաբերի բոլոր գրողներուն, բայց առաւելապէս անոնց որոնք եզակի, բացառիկ դրութիւն ունին, և որոնց գրած խօսքը ամենի համար պարտաւորիչ հեղինակութիւն պիտի ունենայ։ Ես համոզուած եմ, կ'ըսէ անգլիացի իմաստասէրը, որ այն պարագայից մէջ, երբ մարդիկ դատողութիւն կ'ընեն առանձին յանդգնութեամբ և ամբարհաւածութեամբ, նոքա ամենէն շատ կը յափշտակուին և կ'ենթարկուին կրքերու ազդեցութեան՝ առանց կշռելու, առանց որոշելու իրենց գրութիւնը։ Մինչդեռ մի միայն այդ գրութիւնը կարող էր ազատել զանոնք մեծամեծ անհեթեթութիւններէ։

(Շարունակելի)

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն (1)

«Եթէ մասուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ եւ անդ յիւսեցիս՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ ըզբէն, քոյ պատարագն քո առաջի սեղանոյն, եւ երբ նախ հասեաց ընդ եղբոր քոն, եւ ապա եկեալ մասուցիս զպատարագն քո»

Մատ. Ե. 23.

Սուրբ Աւետարանի այս համարը կատարեալ մեկնելու համար՝ հարկ էր քերթատնէութիւնը բովանդակ բացատրել, զի այդ համար կապակցութիւն ունի այդ գլխոյ և յաջորդ գլխոյ մի քանի համարներուն հետ, որք համառօտ բովանդակութիւն են քրիստոնէական ստորաւորութեանց. բայց քանի որ «Ծաղիկ» այդ համարը միայն կ'առաջարկէ բացատրել, կը ջանամք կարելի եղածին չափ համառօտել նորա իմաստը։

Յայտնի է, որ քրիստոնէութեան նպատակն է կապել զմարդիկ իրարու հետ սիրով և խաղաղութեամբ, որպէս զի ապրին իբրեւ մի ընտանիք՝ մէկ երկնաւոր Հօր գլխած ու արդար խնամոց ներքեւ, իբրեւ մէկ գլխոյ կապուած՝ մէկ մարմին կազմող անդամներ, որք չեն կարող մէկ մէկու հակառակ լինել։ Հակառակութիւնը քակտումն, քակտումը՝ բաժանումն յառաջ կը բերէ։

(1) Ծաղիկի 11րդ թուով առաջարկեալ հարցման բացատրութիւնն ստանալով մի քանի կրօնագէտ աշխարհականներէ, անոնցմէ մին հրատարակեցինք Ծաղիկի նախորդ թուով. ի վերջոյ ստացանք Գեր. Մամբրէ Սրբազանի բացատրութիւնը, զոր նաև կը հրատարակեմք սիրայօժար։

Ծ. Խմբ.

Յայտնի է նաև թէ քրիստոնէութիւնը տեսական կամ սնուանական կըրօն մը չէ. այլ՝ գործնական. ամէն քերթատնէայ անուանեալ անհատ՝ չէ իսկապէս քրիստոնէայ. այլ նոքա են ճշմարիտ քրիստոնէայ կամ առողջ անդամ քրիստոնէական մարմնոյն, որք ճշդիւ կը կատարեն նորա պայմանները. անկեղծ սիրով սերտ կապուած են իրարու հետ, ամենքը միակ գլխոյն Յիւսուսի հետ, յորմէ կը սնանին, կ'աճին և կ'արգիւնաւորին։

Այս բնապէս անջատ սպրոզ անդամք բարոյական միութիւն ունին, որոյ կապն է սէրը և արդիւնքը կամ հետեանքն է խաղաղութիւնը, գութն ու կարեկցութիւնը։ Քրիստոնէական միութեան արտաքին խաղաղութիւնը յառաջ կուգայ ներքին խաղաղութենէ, որով և մոքի խաղաղութենէ. առանց ասոր չէ կարելի իրարու հետ սերտիւ կապուած լինել, գլխէն սնունդ ու աճումն ստանալ և առաքինութեամբ արգիւնաւորել. այլ կը ծիւրի, կը փոխ և լքուելով դուրս կը ձգուի։

Արդ Յիսուս՝ քրիստոնէական եղբայրութիւնը միութեան և խաղաղութեան մէջ պահելու և իրեն հետ անբաժան կապելու համար լերնական քարոզին մէջ կարեւոր պատուէրներ ու հրահանգներ կուտայ. յորոց մին է և այս. «Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ, ևն»։

Քրիստոս այն ատեն Երրայեցւոյ հետ կը խօսէր, որոց աստուածապաշտութեան գլխաւոր գործն էր զոհ, նուէր, ընծայ, պատարագ, որոց մէջ կը բովանդակուէր առ Աստուած ունեցած պարտաւորութեանց մեծ մասը. զի մատուցողը կը դառնայ զԱստուած՝ նորա բոլոր ստորագրելներով, անկէ կախում ունենալը և անոր կարօտ լինելը կը խոտովանէր, զնա կը փառաւորէր, իւր հոգեւոր ու մարմնաւոր պէտքերն անկէ կը խնդրէր և ընդունելու յոյս ու հաւատք կ'ունենար։ Ուրեմն ըսելով թէ «Եթէ նուէրդ սեղանին վրայ մատուցած ատենդ յիշես թէ եղբայրդ քու վրայ խէթ ունի, թող պատարագդ, նուէրդ, ընծայդ սեղանին վրայ, և գընա՛ նախ հաշտուէ եղբորդ հետ, յետոյ գալով նուէրդ ընծայէ»։ Ըսել է որ Աստուածաշտութեան որ և է գործ կատարած ատենդ անգամ եթէ որ և է մէկուն հետ ատելութիւն կամ խէթ ունենաս, ընդունելի չէ մինչև որ չհաշտուիս. օրինաւոր է թողուլ պաշտօնը, և Աստուծոյ աւելի հաճոյական պատարագ է հաշտ լինելը, քան անհաշտ պատարագներն ու պաշտօնները։ Այս պատուէր այնքան ընդհանուր է, որ կը վերաբերի ամէն անհատի, ի՛նչ վիճակի

և աստիճանի տէր կ'ուզէ ըլլայ:

Այս պատուէրով կը սովորեմք, որ քրիստոնեայն ամենուն հետ ալ պէտք է միշտ հաշտ ապրի. վայրկեան մը անգամ ներելի չէ իրեն խռով մնալ. «Սեղանին վրայ նուէր մատուցած ատենդ» ըսելով, ոչ թէ ժամանակ կ'որոշէ կամ հաշտութեան պայման կը դնէ, այլ գործոյն անհրաժեշտ ստիպողականութիւնը կը յայտնէ, որ ատանկ նեղ պարագայի մէջ անգամ ներելի չէ զանցառութեամբ յետաձգել. Գրիստոնէին սիրտը ճշմարիտ սեղան է աստուածապաշտութեան, ուր ամէն վայրկեան օրհնութեան, գոհութեան, շնորհակալեաց և փառաբանութեան պատարագ պէտք է մատուցուի. քրիստոնէին պաշտամունքը միայն սահմանեալ ժամանակներու մէջ փակուած չէ, այլ միշտ, անդադար, յամենայն ժամ. և այս կը լինի, երբ սիրտն ու միտքը միշտ կապուած է Աստուծոյ հետ: Արդ, երբ մէկը ուրիշի մը հետ խռովութիւն, դժտութիւն, խէթ և ատելութիւն ունենայ, սրտի և մտքի խաղաղութիւնը վրդովուած կը լինի. աստուածապաշտութեան այդ նուիրական սուրբ սեղանը—մարդուն սիրտն ու միտքը—տակն ու վրայ եղած ապականուած կը լինի. հոն մատուցուած նուէրն ընդունելի չլինիր, Կայնի նուէրը կը դառնայ, և որովհետեւ խռովութիւնը, խէթը, ատելութիւնը, քակտումն ու բաժանումն է, ուրեմն խռովեալը քակուած է անդամակցութենէ և բաժնուած է գլխէն. այնուհետեւ անընդունելի է իւր նուէրը, աղօթքը, խնդրութեամբը, պահքը, ողորմութիւնը և որ և է աստուածապաշտութեան գործը: Ապա ուրեմն քրիստոնէին պէտք է նախ պատճառ և տեղի չտալ խռովութեան, և երկրորդ, եթէ դժբաղդաբար պատահած է, անմիջապէս փութալ խաղաղութիւնը վերահաստատել, հաշտուիլ ի սրտէ և բոլորովին, որպէս զի երկուքն ալ կարողանան հարգարտ սրտով համարձակ մօտենալ մեր երկնաւոր գթած Հօր, ապա թէ ոչ նա արդար է իւր հատուցման մէջ:

Այս պատուէրին մէջ նկատելու արժանի կէտ մի է սա ևս, թէ Գրիստոս չըսէր—թէ որ դուն խէթ ունենաս—, այլ—թէ որ եղբայրդ խէթ ունի—: Վասն զի երբ այս պարտաւորիչ է, անկասկած ալ աւելի պարտաւորիչ է փութալ հաշտուիլ երբ դուն խէթ ունենաս: Կան շատեր, որ կ'ուզեն հանդարտեցնել իրենց խիղճը և արդարանալ, ըսելով.— Ես անոր հետ բան մը չունիմ.— բայց Փրկիչը կ'ըսէ.— թէ որ եղբայրդ խէթ ունի—, Հաւատամք վայրկեան մը, թէ դուն անոր հետ բան

մը չունիս. սակայն հերիք է որ դուն գիտես ու կը յիշես թէ նա ունի. ուրեմն գիտես որ նա հանգիստ չէ, գիտես որ բաժնուած էք սիրոյ միութենէն. ուրեմն փութալ հաստատել միութիւնը և խաղաղացուր անոր սրտին խռովութիւնը. Սէրը կը պահանջէ զայս և Գրիստոս կը հրամայէ. Իրաւ է. քանի որ նա խէթ ունի, նա ալ իրեւ քրիստոնեայ եղբայր կամ իրեւ մարդ պարտական է գալ հաշտուիլ, բայց չէ եկած, պարտազանց գտնուած է. ուրեմն դուն փութալ կատարել պարտքդ և օրինակովդ սովորեցնել իրեն իւր պարտաւորութիւնը. Սիրոյ գործ չէ թողուլ եղբայրը վրդովման մէջ և խաբուսիկ պատճառներով անձն արդարացնել:

Կ'ըսենք սակայն թէ, անկարելի է որ սիրտդ ու միտքդ խաղաղ լինի, երբ յիշես, որ եղբայրդ խռով է քեզի հետ, զի այդ յիշելդ իսկ վրդովմանդ նշանն է. կրնայ ըլլալ որ դուն խէթ չունենաս, այդ լաւ է. բայց մտածելդ թէ նա խռով է քեզի հետ, հարկաւ մտածել պիտի տայ այդ խռովութեան շարժառիթներուն ու հետեւանքներուն վերայ. պիտի մտածես անշուշտ քու արդարութեանդ ու անմեղութեանդ վերայ. պիտի դատես ու դատապարտես անոր արարքները. մտքով այսպէս ընելդ ալ վրդովմանք է և յանցանք. բայց անշուշտ ուրիշներուն ալ այդպէս պիտի պատմես, անոնց խորհուրդն ալ առնելու և անոնց առջև ալ արդարանալու համար, այս ալ քիչ ատելութիւն չէ. ուրեմն դուն ալ վրդովուած ես, սիրտդ ու միտքդ խաղաղ չէ. ատով դուն ալ եղբայրսիրութեան դէմ կը մեղանչես:

Ապաքէն թէ որ նա իսկ լինի միակ և բուն յանցաւորը և յամառի անգամ, պարտաւոր ես աւ վայր մի գոհել անձնասիրութիւնդ՝ եղբայրսիրութեան, և ուղղել անոր յանցանքն ու յամառութիւնը. եթէ այս չյաջողիս, գոնէ կատարելապէս պէտք է համոզես զինքը թէ—դուն իրեն հետ բնաւ խէթ չունիս. և ի սրտէ բոլորովին ներած ես—, և այս պէտք է լինի ճշմարիտ, անկեղծ և կատարեալ, զի Աստուած քու սիրտդ գիտէ և կեղծաւորութիւնը կ'ատէ:

Գրիստոնեայն պէտք չէ հաշտութիւնը օրէ օր թողուլ, սպասելով այս ինչ և այն ինչ տօնին կամ հաղորդութիւն առնելու, զի թողունք որ կեանքն երաշխաւորեալ չէ, այլ և նա ամէն ժամ կ'ապրի Աստուծոյ ներկայութեանը և ամէն վայրկեան կախումն ունի անկէ. այլոց հետ հաշտ չեղողը չը կրնար Աստուծոյ հետ ալ հաշտ լինել, ուստի և չէ կարող համարձակ Աստուծոյ ներկայանալ. Ինչպէս ամէն մեզքի

յիշատակը, նոյնպէս և ատելութեան յիշատակը անպտուղ կ'ընէ քրիստոնէին բարեպաշտութիւնը:

Սէր, խաղաղութիւն, կարեկցութիւն առ ամենայն մարդիկ, ահա՛ քրիստոնէութեան նշանաբանը կամ յատկանիշը. թէ որ բան մը պակսի այս նշանէն, կը կորսուի նորա կատարելութիւնը. անոր համար այս գլուխը կը կնքէ Գրիստոս ըսելով. «Եղբրուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»:

Մեք ևս նոյն խօսքով կը վերջացնեմք զայս յօդուած, մաղթելով ամենուն սէր և խաղաղութիւն. ու կը մենամը աղօթող Միաբան Ս. Երուսաղէմի

ՄԱՄԲՐԷ ԵՊՍ. Յ. ՄԱՐԿՈՍԵԱՆ

92 յունվ. 26 յերովս.
Ի Ս. Յակովբ վանս Հայոց

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼՈՐՏ ԹԵՆՆԻՍՆ

(Lord Tennyson)

Եղած են բանաստեղծներ, որք անարժանաբար խլած են արքունական պատուոյ դափնին. ժամանակակից պըսակաւոր բանաստեղծն (Poet Laureate)՝ Թէնիսոնն՝ սակայն ընդհանուր հաւանութեամբ արժանի համարուած է այդ պատուոյն:

Ալֆրէտ Թէնիսոնն ծնած է 1809ին. կրթուած է ի Բէյլիֆիլտ. իւր բանաստեղծական ասպարէզն՝ հաւանաբար՝ կ'սկսէր 1829ին, երբ ստացաւ մետալ մը մրցման մը մէջ գրած քերթուածին համար. Ատկէ տարի մը վերջը հրատարակութեան տուաւ փոքրիկ հատոր մը «Բանաստեղծութիւնք. գլխաւորաբար քնարերգական» անուամբ. Այդ հատորի մէջ ամփոփուած նմոյշներ արդէն իսկ կ'աղահովէին փայլուն ապագայ մը և մեծ անուն մը հեղինակին համար. այդ փոքրիկ հատորի երիտասարդ հեղինակն անխղճօրէն քննադատուեցաւ ժամանակին գրագիտաց կողմանէ. և սակայն ընդհանուր ընթերցողաց կողմանէ լաւ ընդունելութիւն մը գտաւ այդ հատորն, որով և Թէնիսոնն չվարանեցաւ քանի մը տարի վերջն հրատարակել երկրորդ հատոր մը, յորում աւելի հասուն խորհրդի և վարժ ոճի արտադրութիւնք կը տեսնուին, ի մէջ այլոց «Ջողացականին Աղջիկը», «Մայիսի Թագուհին», որոց վերջինն է սրտաշարժ պատկեր գեղանի գեղջուկ աղջկան մը որ կը թաւաժի անգլ. գարուննի մը նորարոգող ծաղկանց մէջ. Վերոյիշեալ երկրորդ հատորի երեւումն

գամ մ'եւս անարդար և անգութ քննադատութեանց ենթարկեցին մեր բանաստեղծն: Հետեւեալ ինն տարւոյ միջոցին լուռ մնաց խոստմնալից բանաստեղծն: այլ սակայն ծոյլ կեանքի մը լուռութիւնը չէր այդ: 1842ին վերստին հրապարակ իջաւ Թէնիսըն կրկին հատորներով, յորս գետեղուած էին «Պարտիզաններն Աղջիկը», «Տօրա», «Լէյտի Բլարա վէր տը վէր» և այլք, որք անյաբար լափուեցան ընթերցասէր հասարակութեան: «Լէյտի Բլարա վէր տը վէր» քերթուածն է գայրալի կշտամբանք մը բարձր դասի պատկանող գեղուհւոյ մը ցուրտ գոռոզութեան և մահացու անգութութեան դէմ: Համառօտ քերթուած մ'է այն: Թէնիսընի առիւծային բնութիւնն տեսնելու համար բաւ է կարգաւ այդ անգութական կտորն:

Վերոյիշեալ երկու հատորներն հրատարակելէ վերջ Թէնիսընի «կծուքննադատք» տակաւ առ տակաւ լռեցին: «Ջաղացականն Աղջկան» հեղինակին համբաւն ապահովեալ էր այլ ևս: և այդ օրէ սկսելով Թէնիսըն ունեցած է բարձր և նախանձելի դիրք մը անգլ. հարուստ գրականութեան մէջ: Թէնիսընի յաջորդ գործն եղաւ դիւցազներգական երեակայական քերթուածն «Իշխանուհին»: Երկու խօսքով փորձենք դժեւ այդ նշանաւոր քերթուածի ուրուագիծն: Իշխան մը և իշխանուհի մը կը նշանուին. բայց բնաւ չեն տեսած զիրար: Երիտասարդ իշխանը կը սիրէ անտեսանելի գեղուհին, իշխանուհին երկու որբեայրիներու ազդեցութեան ներքեւ գտնուելով, կ'ատէ ամուսնութեան գաղափարը և կը հիմնէ համալսարան մը աղջկանց համար: Իգական հագուստով ծաղեալ իշխանն և երկու բարեկամք ակադեմական պատմուճանը կը հագնին և ազատ համարձակ կը խառնուին փափկասուն աշակերտուհեաց հետ: Ծառախօսութեանց և դպրոցին այլ և այլ գործառնութեանց ներկայ կը գտնուին. կարճ խօսքով գործը ջուրին էր, մինչև որ երկրաբանական պտոյտի մը առթիւ իշխանուհին գետը կ'իյնայ և սահանքի մը եզրէն կը փրկուի իւր սիրահարին միջոցաւ: Գաղտնիքն այսպէս յայտնուելով, հետամուտք կ'որտաքսուին, թէ և կեանք մը ազատուած էր: Ապա կուգայ պատերազմ երկու թագաւորութեանց միջև: Իշխանը կուռոյն մէջ կ'իյնայ անգղայ, և երբ Խտա՝ դպրոցին պետը՝ կը դառնայ հիւանդին անկողնոյն շուրջն, նոր լոյս մը կը ծագի իւր վրայ, մինչ իշխանը կենաց և մահուան միջև կը տատանէր: Կ'սկսի զգալ նէ թէ տան մը փափուկ պաշտօն յարմարագոյն ուսում

մ'է իւր սեռին համար քան թէ քառակուսի և խորանարդ արմատներն կամ քիմիական բաղադրութեան մը յատկութիւններն: Այս քերթուածն իրօք դեղեցիկ է և շնորհալի. լի խմածութեւ և ճոխ վեմ՝ զաղափարներով:

Կենացը մէջ կանուխէն մեծ տխրութիւն մը ինկած էր Թէնիսընի վրայ: Պատմագէտն Հալլամի որդին՝ Թէնիսընի սրտակից բարեկամը՝ կը մեռնի ի Վիեննա: Թէնիսըն երկար ատեն անմխիթար կը մնայ այս դառն կորուստին համար: Կերպով մը գրադելու և ցուր մասամբ մոռնալու համար, իւր ողբացեալ բարեկամին յիշատակին կը հիւսէ կարգ մը տաղեր, թուով հարկը քսան և ինն, զորս «Ի յիշատակ» անուն հատորով մը կը հրատարակէ 1850ին: Թէնիսընի այս գործը համարուած է անհաւասարելի ողբերգական մը անգլ. գրականութեան մէջ: 1850ին կը մեռնէր Ուորաշուրթն, և արքայական գահինն կ'անցնի Թէնիսընի և այդ օրէ սկսեալ մինչ ցայսօր «Իշխանուհին» հեղինակը կը մնայ Անգլիացոց պատկաւոր բանաստեղծն: Յայտնի է ընթերցողին անշուշտ թէ «Պատկաւոր բանաստեղծ» ին պաշտօնն է տաղեր հիւսել արքայական գերդաստանի վերաբերեալ նշանաւոր դիպաց առթիւ, որպիսիք են մահ և ծնունդ: Օրինակի համար միայն յիշեմ աստ փակագծի մէջ թէ Թէնիսըն այս ամուսայ կարեւորագոյն անգլ. հանդիսի մը մէջ հրատարակած է ողբերգ մը Բլարինսի Դուքսին մահուան առթիւ: Թէնիսընի «պաշտօնապէս» գրած առաջին տաղն էր Ուէլլինկթընի մահուան վրայ:

Պատկաւոր բանաստեղծի պատուոյն հասնելէ յետոյ, Թէնիսըն շարունակեց անշուշտ գրել մեծ ու փոքր քերթուածներ և կը շարժէ իւր վարժ գրիչը ցայսօր: Այդ ժամանակամիջոցի մէջ արտադրած երկոցը անուններն երկարօրէն աստ յիշատակել չէ նպատակ, զի այդ ինձ՝ ձանձրալի և ընթերցողին ալ՝ անօգուտ պիտի լինի: Կը յիշեմ սակայն հետեւեալ նշանաւորագոյն գործերն. — «Մօտ», «Ինօք Արտըն» և «Հիւսիսային Երկրագործն», «Թագուհին Մէրի», «Հարըլտ» և «Բոժակը» իւր թատերական բանաստեղծութեանց կարեւորները կարելի է համարիլ: Իսկ Թէնիսընի գլուխ գործոցը կը ճանչցուի «Թագաւորին Հովուերգութիւնը» անուն խիստ երկար բանաստեղծութիւնն, որ ըստ ոմանց հեղինակին միւս փոքր գործերուն հաւասարելէ հեռի է: Գրագիտաց ընդհանուր դատողութիւնը սակայն հեղինակին նպաստաւոր է: Սոքա կը հաւաստեն թէ Թէնիսընի ամենէն ընտիր տողերն և գաղափար-

ները պէտք է փնտռել վերոյիշեալ հոսիւերգութեանց մէջ. և թէ այդ գործի հրատարակութենէն ի վեր հեղինակը մասնաւոր յիշատակութեան և ուշադրութեան արժանի գործ մը չէ տուած մեզ: Զարմանալի իրողութիւն մ'է թէ իւրաքանչիւր մեծ բանաստեղծի կենաց մէջ կուգայ ժամանակ մը երբ մեծ գործ մը արտադրելու փափաք մը կը գրաւէ զնա: Օրինակներ անսլակաս են: Իրողութիւն մ'է միանգամայն թէ երկար բանաստեղծութիւնք շատ դիւրաւ և մեծ հաճոյքով չեն կարգացուիր միշտ: Ինձ ծանօթ միակ բացառութիւնն է Միլտոնի Դրախտ Կորուսեալն, և հաւանօրէն ասոր իսկ բացատրութիւնը գիւրին է, երբ յիշեմ թէ Դրախտ Կորուսեալ թէ և երկար, այլ բաժնուած է գրքերու, որոց իւրաքանչիւրը մարդ կրնայ ընթեռնուլ մէկ անգամ մէն:

Արդ, համառօտիւ տեսնենք այս պըսակաւոր ծերունի բանաստեղծին մասնաւոր յատկութիւններն: Կենացը առաջին մասը Անգլիոյ պարզ և տափաւոր գաւառներէն միոյն մէջ անցուցած է Թէնիսըն: Բնութեան նկատմամբ իւր ունեցած գաղափարը չէ առած Ալլիսի բարձունքէն, այլ ամէն տեղի յատուկ և սովորական տարրերէ: Գիտական ոգւով լի է նա. մեր արհամարհած ծաղիկն իւր ուսման աւարկայն կ'ընէ. դաշտին վայրի ծաղիկներու, որպէս և ընտանի անասնոց նկատմամբ տուած գիտական տեղեկութիւնները կրնան նախանձի մատնել մասնագէտներն: Բնութեան ուսանող մ'է, բառին ընդարձակ և լեցուն նշանակութեամբ: Անպատեհ չլինի թերեւս յիշել աստ թէ ոմանք կը քննադատեն զԹէնիսըն բանագող: Օրինակ մը՝ կ'ըսեն ոմանք թէ Թէնիսըն իւր բնութեան նկարագրութիւնները փոխ կ'առնու իւր նախորդէն Ուորաշուրթնէ, և կամ Շէլլիէ: Պատկաւորը սակայն ինքն իրեն համար կը պատասխանէ հետեւեալ կերպով և կատարեալ տրամաբանութեամբ, թէ՝ մարդկային աչքը կը նային միեւնոյն աւարկայի վրայ, աշխարհի ամէն կողմերն, և հետեւաբար պէտք է լինին զուգադիպութիւնք գաղափարաց և արտայայտութիւնք տպաւորութեանց: Անվախօրէն կը յայտնէ թէ ինք կը համաձայնի և կը նմանի Շէլլիի կամ Ուորաշուրթնի, ոչ թէ անոնց գրքերը կարդացած լինելուն համար, բայց քանզի ինք և նոքա կարգացած են բնութեան միեւնոյն գիրքը, եւ ապաքէն նշանակելի տարբերութիւն մը կայ Ուորաշուրթնի և Թէնիսընի միջև: առաջինը կը մեկնէ, իսկ երկրորդը կը նկարագրէ բնութիւնն: Հետագոյնի

ընտրութիւնը թէննիսընի մէկ մասնաւորութիւնն է:

Ընտանեկան յարկին տակ գորովազուծ մօր մը օրհնութիւնը վայելած է թէննիսըն. այդմ վերագրելի է թերեւս կնոջ նկատմամբ ունեցած յարգանքն և համակրանքն, թէ և գիտեմք թէ ամէն բանաստեղծը ունեցած են տեսակ մը սէր առ գեղեցիկ սեւն: Թէննիսընի սէրը սակայն չնմանիր բնաւ Պայրընի վայրագ սիրոյն որ յաւէտ կը մօտենար տարրիանքի: Հարկ չկայ անշուշտ ըսել թէ թէննիսըն ևս երգած է սիրոյ երգեր. կարծես անկարելի է երեակայել բանաստեղծ մը որ սիրոյ և կնոջ նուիրած չլինի տողեր և տաղեր: Թէննիսըն ասպետական ոգի մը ունի գէպ ի կին. նոյն ատեն սակայն կնոջ կուտայ իւր որոշ և յարմար տեղն ընկերութեան մէջ:

Ծովուն սիրահար մ'է թէննիսըն. կանուխ հասակէն ճանչցած է ծովը, և արդէն որպէս գիտեն ընթերցողը, հիմա ալ ութսուն երեք ամեայ պսակաւոր բանաստեղծն Ուայթի կղզին ընտրած է իւր բնակութեան համար: Ներդաշնակ բացատրութեանց համար զարմանալի է թէննիսընի բաւերու պաշարն:

Յօդուածս փակելէ առաջ կ'ուզեմ յաւելուլ թէ ընթերցողներէս անոնք որ կը փափաքին կարգաւ շահեկան ներկարգութիւն մը թէննիսընի առեւտրին կենաց, պիտի կրնան յագեցունել իրենց այդ փափաք, ձեռք ձգելով «Forum» հանդիսի անցեալ դեկտեմբերի թիւն, յորում Սըր Էտուին Աւնըլտի նման գըրագէտ բանաստեղծ մը նկարագրած է մօտ ատեններս պսակաւոր բանաստեղծին տուած իւր մէկ այցելութիւնն, Սըր Է. Աւնըլտ՝ թէննիսընի յաջորդը պիտի լինի, կ'ըսեն ոմանք:

Լոնսոն

Հ. Յ. Տ. Ս.

ԿՐՈՆՈՎԵՆ ՀԵՐՅՈՒՄ Մ'ԵՆՍ

Ընթերցասէր Ազգայինք տեսնելով որ «Ծաղիկ»ի մէջ հրատարակուած կըրօնական հարցերուն գոհացուցիչ պատասխաններ կը տրուին հմուտ գրագիտաց կողմանէ, մի քանի տեղերէ այժմ խնդրած են առաջարկել թէ՛

«Որո՞նք են այն մարմնաւոր (ֆիզիքական) պակասութիւնք, որք կարող են արգելք լինիլ մէկուն՝ ընդունելու որ և է եկեղեցական կոչումն, ինչպէս են՝ քաղցրաբերութիւն, վարդապետութիւն, եպիսկոպոսութիւն, և մինչեւ իսկ կաթողիկոսութիւն:

Քաջայայտ եմք թէ այն հարցման ևս կը փութան պատասխանել «Ծաղիկ»ի կրօնագէտ աշխատակիցը:

ԾՈՂԱՆԻՍ

Կր քալեմք գէշ ծովափն ի վեր երեկոյեան դէմ քովէ քով. Դու կը դիտես ծովն փրփրահեր Ձեռքդ ձեռացքս մէջ բողով:

Բեկբեկ նրոյն մ'արեգական Կուգայ լընուլ աշկունքդ ոսկի, Ու՛յ, այն աշկունքդ սիրական Ուր կը փայլի քու ջինջ հոգի:

Ծովու ոլորտն ալ ոսկեծիր կը շողողայ մեզ յանգիման, Այսպէս եւ կեանքն ալ լուսածիր Մեզի կուսայ ցոյց հեռասան:

Մենք երազոց շաղիքն վրայ Սիրամուր կը քափառինք, Աւսարհ մեզի դրախտ կերեւայ, Գլուխնու վրայ ժրպիտ երկինք:

Եւ զինք տեսնէր իսկ որ քալաւ Կը սողոսկէ չորս դիմ խաւար, Ամպոց, միգի, ծածկոյթ մը քաւ Կը մրագնէ համայն զաւսարհ:

Արդ կը մոնչէ ծովն անարկու, Վայրագ հողմուկ ցունց քան համակ Յից կասարներն կոհակներու. Արդ կոյր քաւերն են սանձարձակ:

Դու կը սարսնուս, հեզ ալաւնիս, Նախագգացմամբ դառն, անպատում, ձակիկ վրայ լըսած երկնից Ձարագուտակ խուլ մըրմուռ:

Թո՛ղ քեզ, հրեշտակ, երկիւղ չազդեն Սպաննալից բոցն օձապըսոյ Ձոր կ'արձակէ մուրն իւր ծոցէն.

Տու՛ր խրատայտ նըկուն հոգւոյդ.

Թէ պայծառ օր ու կեանք ժրպիտ, Կամ զմեզ պատէ անն մըրուքեան, Մի՛ս քովէ քով, մի՛ս միասին

Ձաւսարհ կանցնեմք մենք անբաժան:

ՎԱՅՐԱՍ ՍՎԱՅԵԱՆ (1)

(1) Բերայի Սիթէ տ'Ալէրի մէջ հրատարակուող Սոսրեանց 'Իանձարանը անցեալ օր մեր համակրելի աշխատակից Սվաճեան Վահրամ Էֆէնտիի ոտանաւորներուն համար՝ բնականաբար առանց ամշնալու՝ կը ծանուցանէր թէ, «ամէնն ալ բնականաբար դեռ անտիպ» կը մնան, մինչ ընթերցողը գիտեն թէ յարգելի Սվաճեանի այս առաջին ոտանաւորը չէ որ կը հրատարակուի այսօր: Ընթերցողը այս փոքրիկ օրինակէն թո՛ղ տեսնէ թէ, միայն իրենց աչքէն հեռու կատարուող դէպքերը, իրողութիւնները չեն որ ուրացման, խեղաթիւրման, ստուգեան նիւթ կը մատակարարեն Սոսրեանց Գանձարանին, այլ այն իրողութիւններն իսկ որոնք ժողովրդեան աչաց առջեւ կը կատարուին, Մեղաւորն ո՞վ է. ընթերցողը արժանապատուութիւնն այդ կերպով ծաղրողին է, թէ՛ ընթերցողին որ կը քաջալերէ այդպիսի թերթ մը՝ ծաղրուելու համար անկէ: Ծ. ՍՄԲ.

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻԻ

Բանասէրն «Նարհիմ» պատուական «Ծաղիկ»ի 12 թուով, կազանդի խօսք կ'ընէ Կեսարացոց զաւառաբարբառին առթիւ. արդէն տխորժանօք կ'ընթեռնուի հնակրկտին երկար տողերը, յորմէ հետէ բացատրութեան ձեռնարկած է Յոյն հեղինակին կարծեաց վերայ. այլ «կազանդի աւետար» մասնաւոր գրգռ մ'ազգեց ինձ, մեր և ք կազանդըն և մեր աւետարտ օտնել «Ծաղիկ»ի հրապարակին վերայ, այն կազանդն՝ որ մանկութեան յիշատակներս զարթոյց ու քաղցր յուզում մը կարծես, ծնաւ յիս:

Դեկտ. 31էն վերջ, վերջալուսոյ ազատ փայլին հետ կ'սկսին սլիկ միկի պտոյտներն գիւղացի մանկանց. խումբեր կազմած են. տանեաց վրայ արագ կը թռին այսր անդր, ի ձեռին ունենով դործի մը՝ զոր ալելուիա կ'անուանեմք:

Այդ գործին է փոքրիկ անօթ մը՝ լինի պղնձեղէն, կաւեղէն, կամ ձեռնոց մ'է և գուլարայ մը, պարանի կամ կեմի (խոտէ չուան) ծայրը կապուած:

Երբ տանեաց լուսամտէն կախուի ալելուիան, տան տիկինը մրգեղինաց անտուկին կը մերձենայ, կը դիտէ և կարի գգոյշ կը մնայ՝ արագ հասուցանելով իւր պարգևը. զի գուցէ սլիկ կախիչն ալելուիային խօսի. (1) հակառակ օրինաց որ անշուշտ մնալ կը տնօրինէ, և խօսին աղետաբեր լինի տանը. Այս պահուն լուսնի շողերն այնքան հաճելի չեն թուի գիւղացի մանուկներուն, զի յայլոց անձանօթ մնալն աղէկ է, և կրնայ երիցս անգամ երթալ առատուձեռն տիկնոջ մ'երգիլն: Ալելուիան՝ գիւղին հատարակաց (օտաւրլիներու) սեփեկի ծխնելոյզէն ալ կը կախուի. այդ տեղ մանկան մէկ մէկ փարանոցներ կ'ընդունի, կամ եկեղեցին մոմ վառելու, կամ՝ եթէ վարժարանէ խոյս տըլու է, վէճ խաղալու համար: Չմոռնամք ըսել թէ Կեսարացոց «քէթէն» մենք ալ ունիմք քաղցր և գիւղ. երկրագործին տունը զանազան ձև և անուն կ'ստանայ «քէթէն», ինչպէս, «խընոցի» (մածունէն իւղ հանելու գործիք), լուծք եղանց, քոակ, ևն, զորս տանն անդամոց բաղդին և անասնոց աջողակութեան բաժին կը հանեն. նոյնպէս մի մեծ և կտրակ բաղարջ կը շինեն և կ'անուանեն զայն Տարի. խմորին մէջը դրուած է տան փարանոց մը. ութ օր վերջ երբ բաժնեն զայն իրենց մէջ, բաղդն յաջող է անոր՝ որուն բաժին լինի տան փարանոցը պորուհակող կտորը: Աւանդապահ գիւղեր:

(1) Եթէ ալելուիան կախողը խօսի, Տան տիկնոջ «պտուկ»ները կը կոտորին եղեր:

ղացութիւնը այս և ասոնց նման բազում սովորութեամբք կը տօնեն ամանորն, իսկ քաղաքը վերջ տուած է անոնց: Գալով «աւետիս» երգելուն, ի հնուէն տիրացուներ չգտնուած ժամանակ՝ Ս. Ծննդեան տօնի երեկոյին (Յունուար 5)՝ խումբ մը մարդիկ՝ տնէ՛ր տուն կը շրջին եղեր երգելով՝ իւր, մեղըր և հաւկիթ ժողովելու համար. իրենց երգն էր.

«Աւետիս, աւետիս. աւետիս.
«Հա՛յ, եկել է, եկել է, ո՞վ եկել է.»
«Գայլն եկել է. կարմիր կովէն իւր կ'ուզէ, կուտուզ հաւէն
«Հաւկիթ կ'ուզէ. աւետիս, աւետիս, աւետիս»:

Ո՛չ միայն գայլը, այլ և ուրիշ կենդանիներ և գաղաններ մէջ կը բերեն եղեր պարզամիտ որկրամուկները իրենց երգին մէջ.

Իսկ այժմ գիւղերու մէջ մենք կը տօնեմք Յունուար 6ի նախընթաց երեկոյն հետեւեալ կերպով.)

Նոր երգ

Աւետիս, աւետիս, աւետիս.
(Յետ Աստուածային երգոց և շարականաց)

Աւետիս, իւզէն կուէ, մեղրէն կուէ տան տիկին.

Աւետիս, սերէն բռնէ, մեղրէն կուէ տան տիկին...

Քիչ մ'ալ իւր հետք բերես տան տիկին,
Աւետիս, սախըն մատդ ալ հետ չը կըռես տան տիկին:

Բաբերգ

Ի Պ Ի Ր

ԿՈՎԿԱՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Յունվ. 6ին պատահած Կուր գետի աղէտին պատճառաւ փնտսուած աղքատ ընտանեաց ի նպաստ, նուիրատուութիւնք կը շարունակուին ի Կովկաս: Նոր-Դար լրագրոյ խմբագրութեան զանազան տեղերէ զանազան գումարներ կը ղրկուին հետզհետէ՝ բաժնուելու համար նոյն ընտանեաց: Այսպէս, վերջին թղթաբերով եկած Նոր-Դարի թիւերէն ալ կ'իմանամք թէ Բագուցի վաճառական Պ. Մինաս Մելիքեան 100 ռուբլի ղրկեր է Նոր-Դարի խմբագրութեան. Յովհ. Հալաբեանց ղրկեր է 20 ռուբլի. նոյնպէս Բագուցի վաճառական Պ. Մինաս Աղամեանց հարսանեկան հանգիսի մը մէջ 40 ռուբլի հաւաքելով, ղրկեր է Նոր-Դարի խմբագրութեան: Մանգլիսէն Պ. Արշակ Թումայեան հաւաքելով ղրկեր է 20 ռուբլի: Զանազան գումարներ ևս ղըրկուած են Ասլաբադէն, Նոր-Նախիջևանէն և ուրիշ տեղերէ:

— Էջմիածնէն կը գրեն Նոր-Դարի

թէ, վանքին միաբաններէն ոչ ոք որ և է գումար չէ ղրկած թիֆլիս, յունվ. 6ի աղէտին փնտսուած ընտանեաց ի նըպաստ:

Նոր-Դարի մէջ կը կարդամք նաև հետեւեալ լուրերը.

— Կը յիշեն ընթերցողք թէ Պ. Գրիգոր Իգմիրեան մերժած էր դատարանին առջև երդնուլ ուսու քահանային միջոցաւ և ուսու լեզուաւ, և այս պատճառով 25 ռուբլի տուգանքի դատաւարատուելով, այս վճուի դէմ բողոք բարձած էր առաջի Նահանգական դատարանի վճռարեկ ատենին. Յունվ. 27ին վճռարեկ ատենը այս խնդրով զրաղելով, հաստատեալ է նախապէս տըրուած վճիռը:

— Խորհուրդ կայ մշտական կամուրջ շինելու Վանքի Մայր Եկեղեցւոյ բակէն դէպ ի Մատթեան կղզին, ջրօրհնէքի հանդէսի համար:

— Մոսկուայի հասարակութեան մէջ մտադրութիւն կայ տօնելու բանաստեղծ Պ. Սմբատ Շահաղիգեանի 30 ամեայ գրական գործունէութեան յօբելեանը: Որպէս ուսուցիչ, Պ. Ս. Շահաղիգեան առաջինը եղած է ապահովութեան դրամագլուխ կազմելու՝ գըրականական և ուսուցչական փշոտ ապարիզի արժանաւոր և բարեխիղճ մըշակներու համար:

— Պաթումէն կը գրեն Նոր-Դարին. «Պ. Ղազարոս Աղայեան յունվ. 23ին Օսթրիա շոգենաւով ուղևորուեց երուսաղէմ. Պարոնը, ինչպէս իմացանք, գնում է Եանձնարարութեամբ՝ Խրիմեան Սրբազանի մօտ, որպէս զի նորա օգնութեամբ կարելի լինի առաջ տանիլ իրենց Կաթողիկոսական թեկնածուի գործը»:

— Նոր-Դարի «Զուարճալիք»ներուն մէջ կը կարդամք.

Չենք յիշում որ լրագրում կարդացել ենք այսպիսի մի բան. «Պետրոս պապին ո՛ւր գնաց. երուսաղէմ ուխտ գնաց»:

Մենք կարող ենք դրան հետեւելով ասել. «Ղազար բիճան (հօրեղբայր) ո՛ւր գնաց, երուսաղէմ ուխտ գնաց, և այլն»:

ԲԱԳՈՒԻՅ. — Հաստատ աղբիւրից լսեցինք, որ յունվարի 23ին Շամախում 83 տարեկան հասակում վախճանուել է հանրահռչակ Սարգիս վարժապետ Համբարձումեան բողոքականապետը: Սրա մահն անշուշտ մեծ ցաւ պէտք է պատճառէ Պ. Աթորուհուն:

ՄՈՍԿՈՒԱՅԻՑ. — Տեղիս Կայսերական հնագիտական ընկերութեան նախագահ-գրաֆուէի Ուվարովա՝ Շամախու թեմական առաջնորդ գերապետի Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանից բեւեռագրերի մի ստուար ալբոմ է

ստացել ծանօթութիւններով հանդերձ, որ այժմս գրաֆուէի խնդրի համաձայն թարգմանուում է ուսուցիչ: Գրաֆուէի Ուվարովայի մի պատկառելի ըստուար ալբոմ, որ զանազան վանքերի, խաչքարերի և այլ հնութիւնների լուսանկար պատկերներից է բաղկացած և որը Ղրիմի Աջրդ գարու Հայ գաղթականութեան է վերաբերում, նոյնպէս արդէն մեծ մասամբ թարգմանուած է և թարգմանուում է: Թարգմանողն է նոյն հնագիտական ժողովի անդամ Պ. Խ. Յովհաննիսեանը:

ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Պ. Լէօն-տը-Տօլնիի Սօրպօնի մէջ ըրած կրօնական բանախօսութիւնք, որը բազում տարիներէ ի վեր մեծ աղմուկ յարուցած էին աշխարհի հինգ մասանց մէջ, յարդ կը մնային անտիպ: Հրատարակիչ էրնէսթ Լըրու, ի Բարիզ վերջերս ի լոյս ընծայած է այդ բանախօսութեանց առաջին շարքը: Աստուծոյ անուանի գիտնականին Պուտտայականութեան վրայ արտասանած դասախօսութիւնները չեն, այլ այն դասախօսութիւններն են զորս նուիրած է ապական աշխարհին ամենանշանաւոր կրօնքներէն միոյն, Տաօյակաւոքեան: Պ. տը Բօլնիի նոր գործն ոչ միայն հազարաւոր է ամէն անոնց համար որք խեղամով կը փափաքին Սաքիա-մունի պուտտային ժամանակի մտաւորական շարժման, այլ և մեծ կարեւորութիւն ունի իմաստասիրական ինչ ինչ տեսութեանցն համար զորս հեղինակը կ'արտայայտէ մտածութեան հազուադէպ խորութեամբ մը: Այդ գործոյն մէջ մանաւանդ կը գտնեմք տեսութիւն մ'իւր վարդապետութեան՝ ի վերայ Դոյալոքեան օրինաց, յեղափոխութեան այն երեք շրջանները որոնք պէտք է հասած լինին գիտակցութեան, ոյսինքն ստուգութեան էակաց հակադրութիւն խնդրոյն, և այլն: Գործոյն սկիզբը կայ ներածութիւն մը ի Պ. Ատ. Ֆրանքէ, անդամ Գիտութեանց Կաճառին:

LE CONSEILLER DES MÈRES ET DES JEUNES FILLES

Կը հրատարակուի ի Բարիզ իւրաքանչիւր ամսոյ Աին և 15ին «Ծաղիկ»ի դիրքով և պատկերազարդ: Ներկայ տարւոյս սկիզբէն մտած է իւր 11րդ տարին: Տարեկան բաժանորդագինն է թուրքիոյ համար 15 ֆրանք, Բաժանորդագրուիլ փափաղողք պէտք է գիմեն «Ծաղիկ»ի Յանձնակատարութեան գրասենեկին, 15 ֆրանքի փոխարէն ղրկելով 75 ղրուշ:

ՄԵՍՐՈՊ ԵՌԵՄԻԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՅՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

(Պաղտապեան Տպագրութիւն)

Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ սոյն ընդարձակ բառարան, անչափ գովեստիւք գնահատեալ շատ մը ձեռն-հաս անձերէ, աւարտած է բոլորովին:

Իւր ձոնագոյն սլարունակութեամբ, հայերէն համանշանակներու ճշգրտութեամբ, շատ մը նորակերտ և գաւառական բառերով և ճշգրտաբար՝ բողմաշատ հեղինակին սոյն երկն անհրաժեշտ գործի մ'է թէ՛ թարգմանաց, թէ՛ ուսանողաց, և թէ՛ առ հասարակ ամէն անոնց որք կ'զբաղին ֆրանսերէն լեզուով:

Ֆրանսերէնի մէջ գործածական բոլոր բառերն, ոճերն ու ասացումներն հաւաքելով, և դնելով անոնց ամէնուն ալ ճշգրտոյն նշանակութիւնները, գաւառական առումներն և համապատասխան հայերէն նշանակութիւններն, ի հարկին թուրքերէններն ևս, նուազարեան էֆէնտի յօրինած է շատ հարուստ, շատ կատարեալ գործ մը, արդիւնք երկարժամանակեայ աշխատութեանց, անդուլ խուզարկութեանց և խղճամիտ ու խմաստուն հետազոտութեանց:

Գործոյն կարեւորութեան կը համապատասխանէ նաև տպագրութիւնն, որ Պաղտապեան տպարանի խնամեալ արտադրութեանց մին է և կը կազմէ ըստուար և գեղեցիկ հատոր մը, ձոնագոյն մատենադարանաց մէջ ընտիր տեղ մը գրաւելու արժանի:

Մինչեւ յառաջիկայ փետրուար 20, որոշուած է անփոփոխ պահել նուազարեան Բառարանին գինը, 20 Փրանք:

Գաւառներէն ուղղոյնքը պէտք է դիմեն «Մաղիկ»ի Յանձնակատարութեան Գրասենեակին. ֆոստի ծախսը համար ծովեզերեայ քաղաքներէ պէտք է զրկել 6 զր, ներքին քաղաքներէ՝ 8 զրու:

ՎԱՆՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

Վիենայի Երաժշտանոցէն ելած անւանի դաշնակահար. մասնաւոր գասեր ստանձնելու համար կուտայ հետեւեալ հասցէն. Բերա, Բոմանտիկէրի նուագարանաց վաճառատունը, կամ ԾԱՂԻԿի Նմրագրատունը, Պահէ-Գարու, Թաշխան, թիւ 50:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Քոլումպոսի կենդանագիրը. — Վալէնտէյի (Ֆրանսա) դղեկին մէջ գտնուող կենդանագրի մը արձանագրութիւնը կարծել կուտայ թէ այդ կենդանագիր Քոլումպոսինը լինի:

Սաւակոսայի ծուռ աւտարակը. — Սաւակոսայի (Սաւակո) ծուռ աւտարակը քանգուած է. 1504ին շինուած էր 84 մէթր երկայնութեամբ, քաղաքին ժամացոյցը կրելու համար. Գաղաքին ժողովուրդը այս աւտարակին վրայ ճարտարապետական սքանչելիք մը անհնել ուզելով՝ զայն ծուռ շինել տուած էր, գագաթը ուղղագծէն 2 1/2 մէթր հակեալ. սակայն աւտարակին բոլոր երկայնութեամբը ձեղք մը բացուելով, փրկելու վտանգ կ'սպառնար. 1860ին կատարուած նորոգութիւնն ևս անօգուտ եղած էր:

Կայծակահար օդապարիկ. — Ի Հրուովմ, փոթորկալից օր մը, երբ օդապարիկով գլխուորական փորձեր կը կատարէին, օդանաւորդք՝ որ վեցերորդ անգամ բարձրացած էին, յանկարծ բաղխում մը կ'զգան, և օդապարիկը այրելով կ'սկսի վար իջնել. օդապարիկը կայծակնաճար եղած էր. բարեբաղդաբար բոլորովին այրած էր երբ գետին հասան և օդանաւորդք ազատեցան:

Ասուպ մը. — Նոյեմբեր 13ին, Լիօն և Վուարօն քաղաքաց վրայ տարօրինակ ասուպ մը կ'երևի, որ մեծ կարմրադոյն հրային գնդի մը ձևն ունենալով կը թաւալէր. իւր ետեւը թողած բաց կապոյտ գիծն 10—15 վայրկեան չէ անհետացած. Ի Սօմմ, մարդ մը իր մէջ 400 մէթր հեռու տեսած է անոր թանձրախիտ անտառի մը վրայ իյնալն, և որ գետին իյնալէ վայրկեան մը յառաջ մարած է:

1890 ի Ֆրանսա. — 1890 տարին Ֆրանսայի համար դժբաղդ տարի մ'եղաւ, նման 1870—71 և 1854—55 տարիներու. ծնունդք ամէն տարիներէ նուազ, ընդհակառակն մահ և ապահարգանք ամենաբազում. 269,332 ամուսնութիւն, 5457 ապահարգան, 838 059 ծնունդք և 876,505 մահ:

Շանց լեզուն. — Գիտեմք թէ Բոֆֆէսէօր կարնէ, մասամբ յաջողած է սովորիլ կապկաց լեզուն. բայց յայտնի չէ թէ շունն ևս՝ կենդանեաց մէջ մարդու ամենամտերիմն՝ ունի՞ իւր լեզուն և չարժեք նախ զայն սովորիլ. այս խնդիր նկատողութեան առնուած է l'universel illustré լրագրոյն մէջ:

Նրաւեսուէր արջ մը. — Ֆրանսայի մի գիւղին մօտ, յանկարծ սեաւ արջ մը երեւելով, բնակիչք ահ ու դողի մէջ կ'իյնան. արջը հանդարտ իւր ճամբան

կը շարունակէր. երբ յանկարծ կը լսուի ջուրակի մը ձայնն, արջը իւրուր այս ձայնին՝ իւր երկու ետեւի ոտքերուն վրայ բարձրացած կ'սկսի երգի խաղերուն համաձայն խաղալ. Բնակիչք խնդրախուսեալ այս դէպքէն, արջին կը մօտենան, և անոր քթին վրայ եղած չըղթայի յայտնի նշաններէն կը հասկնան թէ ժամանակ մը արջը իւր այս խաղալու արհեստը թողով լեռները փախած է:

Կենդանեաց զապումը. — Քիմիագէտ մը հետեւեալ միջոցը կ'առաջարկէ զոսպելու համար անընտել կենդանիները որոյ մեծամեծ վտանգաց կ'ենթարկին կենդանապահք կենդանական պարտիզաց մէջ. կենդանապահն իւր ձեռքը գրեթէ մը սկիւտի ունենայ կիզողական ամֆոնետով լի. երբ կենդանին վտանգ մ'ապառնայ, այս հեղուկէն պէտք է արձակել դէպ ի անոր ուղեղէնքը, որով շնչառութիւնն ընդհատուելով՝ անմիջապէս անձնատուր կը լինի կենդանին:

ԹԱԹՈՒԼ ՔԻՄԻԿԷԼԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբաւոյնքիւնք. — Բերայի նախնական դատարանին անդամ անուանեցաւ Մարգար Էֆ. Ունձեան, անդամ նախնական դատարանին Իւսկիւտարի. — Լազիսթան գաւառին (Տրապիզոն) կառավարիչ անուանեցաւ Հասան պէյ, նախկին կառավարիչ Իշիլ գաւառին (Ատանա). — Էտրիքի Սուլթան Եէրի գաւառակին գայմագամ անուանեցաւ Նուրի պէյ, նախորդ գայմագամ Բահասի. — Ատանայի Թարսուս գաւառակին գայմագամ անուանեցաւ Զիա պէյ, գայմագամ Բաշթի:

Ասիւնք. — Բապիտի աստիճան տրուեցաւ Կարնոյ նախնական դատարանի Հուգուգի ձիւղին նախագահ Ահմէտ Ճէմիլ Էֆէնդի:

Պաշտօնաբաւ. — Ա. կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Կարնոյ կուսակալ Ֆէրիք Հասան Սայրի փաշայի. — Լիազաթի չքաղարամ տրուեցաւ Պոլսոյ Ոստիկանաց Ժողովոյ նախագահ Հիւսնի պէյի և ոստիկան Հիւսէյին, Մէհմէտ Էտիպ ու Սայիլ Էֆէնդիներու:

— Մըսթըօ օղլու հանգուցեալ Պոլսոյ պէյի ժառանգորդք երկար ժամանակէ ի վեր Իտարէի Մախսուսէի վարչութեան հետ պահանջքի խնդիր մը ունէին, զինուորական փոխադրութիւններէ և այլ պարագայներէ գոյացած՝ նոյն վարչութիւնը Պոլսոյ պէյի վրայ եղած ժամանակ, Այթմ ժառանգորդք 10,000 ոսկոյ Թահվիլաթը Օսմանիյէ ստացած լինելով, խնդիրը վերջնականապէս փախուած է:

— Տէրսիմի գաւառին կեդրոնը եղող Խոզաթի բանտէն չորս բանտարկեալք պատը ծակելով փախեր են :

— Ի Տրապիզոն կարմրախտ երեւան ելեր է :

— Կարիկէն կը գրեն առ Սապան թէ տեղւոյն վարժարանը երկուք ու կէս տմսոյ համար պիտի փակուին էնթլուէնցայի պատճառաւ : Կարնէն ի Պայազիտ ճամբայները գոցուեր են ձեան առատութեան պատճառաւ :

— Անսառաց եւ հանգաց վարչութեան հասցեային աւելցնելու պաշտօն ունեցող յանձնաժողովը կազմուելով վերայ է : Այս յանձնաժողովը պիտի քննէ նաեւ թէ կայս . կառավարութեան կողմանէ ցարդ տրուած մենաշնորհք գործադրուած են , թէ հանքաց չահագործման համար տրուած արտօնութիւնը օրինական գործողութեանց կատարումէն յետոյ տրուած են թէ ոչ : Յանձնաժողովը պիտի բաղդատէ նաեւ անտառներէ հանուած ատաղձներու քանակութիւնը մաքսատանց տուեմարներուն հետ , միանգամայն պիտի քննէ Բաթէրսընի հանքային արտածութիւնն եւ Այտընի նահանգին անտառաց նկատմամբ Մէնթէշէի ու Տէնիզլիի ժողովրդեան բողոքները :

— Զմիւռնիոյ փաստաբաններէն Գաւրգատէ Հաֆիզ Րիֆաթ Լֆ . «Ասր» անուն լրագիր մը հրատարակելու արտօնութիւն խնդրած է :

— Թրքաստանաց մէջ եկած օտար դրքերն , եայլն , քննուելու ժամանակ , կրթական նախարարութեան պաշտօնեայք եւս ներկայ պիտի գտնուին :

— Հալալի երկրագործական ու անասնաբուժական վարժարանները միացուցուած են :

— Մարաշ բնակող կաթողիկոսներն արտօնութիւն խնդրած լինելով իրենց եկեղեցւոյն մօտ եկեղեցի մ'աւ չինել , Պետական Խորհուրդը մերժեր է զայս խնդիր՝ նկատելով որ այդ եկեղեցւոյ մէկ կողմը մզկիթ մը եւ միւս կողմն խալամաց գերեզմանատուն մը կը գտնուի :

— Տրապիզոնի կառավարութեան անձնատուր լինելով հնազանդութիւն յայտներ է Պետրոս օղլու Սափա անուն աւագակն , որ ընկերն է Մինաս օղլու Յովհաննէս եւ Պաղտատար անուն աւագակաց , որք Զարչամբայի գաւառակին մէջ ձերբակալուած էին , մին մեռած , միւսը վիրաւորեալ :

— Պրուսայի Առևտրական Սենեակը , Ֆրանսայի մաքսային նոր սակացոյցերուն պատճառաւ չերամբուծական արհեստին կրած վնասները դարմանելու համար , Կ . Պոլսոյ Առևտրական Սենեակին միջոցաւ խնդրած է կայսերական կառավարութենէն ջնջել գործարանաց

և խոզակներու տուրքն եւ տասնամեայ շրջանի մը համար արգելուլ խոզակներու արտածումը :

— Այսքնի նահանգին մէջ երեւան ելած որթալուծը ջնջելու համար հարկ եղած ծախուց հայթայթման միջոցներուն վրայ կը խորհրդակցի՝ Վեհ . Սուլթանին հրամանաւ կազմեալ յանձնաժողով մը :

— Պանաւախս երեւան ելած լինելով Կարնոյ Բարեբոգ գաւառին եւ Խընուս , Բասէն , Քզի ու Օփա գաւառակաց մէջ , հարկ եղած առողջապահական միջոցք ձեռք առնուած են ձեռնհաս իշխանութեան կողմանէ :

— Սուլթանիյէ , Քաղափային-Բժեկաւան եւ Իււաւաղիսական վարժարանաց ուսանող ծրագրերու մէջ ինչ ինչ բարեփոխութիւններ ներմուծել որոշուած է :

— Վանայ նոր կուսակալ Պահրի փաշա ի Կարին կ'սպասէ ձմեռուան պատճառաւ :

— Խարէի ժողովոց անդամք յետ այսորիկ տասանորդի տրոց վարձակալութեան տրուելու գործոց չպիտի կըրնան միջամտել կամ մասնակցիլ . առ այս թոյլտուութիւն ընող պաշտօնեայք խիստ պատասխանատուութեան պիտի ենթարկուին :

— 229,891 օխա ածուխ եւ 900 հատ նոր վերմակներ բաշխուած են , Վեհ . Սուլթանին հրամանաւ եւ ծախիւք , մայրաքաղաքիս 162 թաղերու խալամ եւ ոչ խալամ 9196 աղքատ ընտանեաց : Ընդհանուր ծախք՝ 126,998 զրուշ :

— Քաղափային պաշտօնէից հանգստեան թոշակի սնտուկը Ելմաական գանձէն 600,000 ոսկոյ պահանջը մը ունի եղեր , որոյ տոկոսը կանոնաւորապէս կը վճարէ անցեալ տարիէն սկսեալ : 80 000 ոսկի ալ Սամ . Կայս . Պանքային մէջ ունի եղեր :

— Սով կը սիրէ եղեր Շքոտրա նահանգին այլ եւ այլ կողմերը :

— Քաղափային կալուածական վարկին համար կանոնադիր մը պատրաստուած է Պետական Խորհրդոյ կողմանէ :

— Ի Վիեննա գումարելի երաժշտական ցուցահանդիսին Օամ . ներկայացուցիչ կարգուած է Էմին պէյ , որ արեւելեան երաժշտութեան վրայ տեղեկութիւններ պիտի հաղորդէ եւ ձայնագրութիւններ ցոյց պիտի տայ նոյն ցուցահանդիսին :

— Ասանայի նոր կուսակալ Խալիտ պէյ Թէհրանէն մայրաքաղաքս ժամանեց :

— Ֆէրէնէֆի եւ Սելանիկի միջև երկաթուղւոյ շինութեան համար մի քանի առաջարկներ մատուցուեր են ձեռնհաս իշխանութեան :

— Զմիւռնիոյ շոգենաւային Համի-

տիյէ ընկերութեան վարչութիւնը Պալեօպեան Վսեմ . Մատթէոս էֆէնտիին յանձնուելէն ի վեր , այսինքն իրր երեք ամսոյ միջոցի մէջ , 50,000 զրուշէ աւելի հասութի առաւելութիւն մը գոյացած է :

— Սնդիկ պիսի խառնէ մաքսային վերատեսչութիւնը՝ մայրաքաղաքս բերուած բամպակի իւղերուն մէջ , որպէս զի կարելի չլինի ուրիշ իւղերու հետ խառնելով վաճառել իրր ձէթ :

— Խիւս պաշտախանաւորեալ պիտի ենթարկուին թղթատարական այն պաշտօնեայք , որք ի գաւառս սուրթ կուտան թղթատարական պայուսակաց կորսուելուն :

— Մալաքիոյ գաւառին մէջ եւս պաճարախտ երեւան ելեր է :

— Ի Պաղեսիմ ռուսական ազդեցութեան դէմ մաքաւելով կաթոլիկ շահերը պաշտպանելու համար , Պաղեստինեան ընկերութիւն մը կազմուած է ի Վիեննա :

— Ազնիւ Տեսալէն Դիւր հասցնելու համար կառավարութիւնը մրցում մը պիտի հաստատէ մայրաքաղաքիս մէջ , եւ մրցման մէջ առաջին հանդիսացողները պիտի վարձատրուին :

— Գօնեայի Համիտապատ գաւառակին մէջ վերջերս ծագած անձրեւախառն փոթորիկը 70 ժամ տեւելով , շուկային մէջ 12 խանութներ ամբողջօրին եւ 71 տուններ մասամբ կործաներ են , 15 խանութներ ու 6 տուններ ալ բաւական վնասուեր են : Մարդու կորուստ չէ պատահեր :

— Նրուանդ էֆ . Մարգարեան , գայմաքամ Արշիպեղազոսի նահանգին Իպսարո կղզւոյն , իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ :

— Դասարանաց մէջ գործածուած դրոշմաթուղթերու տեղ նորեր ի հրապարակ պիտի հանուին յառաջիկայ մարտէն սկսեալ :

— Ֆիլիպէի , Խաւֆէօյի ու շրջակայից Միւֆթիներն , կրթական նախարարութենէն իրենց եղած յանձնարարութեան համաձայն , հետզհետէ կը տեղեկագրեն թէ այդ տեղերու մէջ որչա՞ր բարձրագոյն նախակրթարաններ ու նախնական վարժարաններ կը գըտնուին , ո՞րչա՞մ ուսուցիչներ կան , ի՞նչ դասեր կ'աւանդուին եւ մասնակարարութիւններն ի՞նչ եղանակաւ ապահովուած են :

— Շոգեւաժ քաւուէյի երթեւեկութիւն մը՝ Թոփիսանէէն՝ Եէնի-չարշըի ճամբով մինչև ի Բերա՝ հաստատուելու մենաշնորհ խնդրած է երկաթուղւոյ մահճաբարձ վակօններու ընկերութեան ճարտարագէտ Պ . Հէնրի Տօրէ :

— ՅԱՄԱՍԻԱ , երիտասարդ մը դա-

չոյնի հարուածով ուրիշ երիտասարդ մը վերաւորեր է փետր. 2ին: Վերաւոր-
րելոյն հայրը դիմեր է թաղապետական
բժիշկ Իսլահմ Ծաղի Էֆ.ի, որ զվերա-
ւորեալը դարմանելու համար կանխիկ
երեք ոսկի պահանջեր է: Հայրն այս
գումարը վճարելու անկարող լինելով,
բարեսէր անձինք ոմանք մէկ ու կէս
ոսկի հաւաքելով բժշկին տուեր են,
բայց սա դարձեալ չէ գացեր: Ի վեր-
ջոյ Տոբթ. Ալանեան էֆէնտին տար-
ուելով, կը յայտարարէ թէ, ժամանակ
անցած լինելով՝ վերկուծիւնն անկարե-
լի է այլ եւս, և արդարեւ խեղճ երի-
տասարդը քիչ յետոյ կը մեռնի, զոհուե-
լով թաղապետական բժշկին շահախնդ-
րութեան:

— Օսմ. Օրէնդրութեան և իրաւա-
բանութեան վրայ բանախօսութիւն մը
արտասաներ է Սափա փաշա ի Բարիզ,
մեծ մասամբ գրագէտներէ ու գիտուն-
ներէ բաղկացեալ ակումբի մը մէջ, որք
ծափահարեր են այս բանախօսութիւնը:
Սափա փաշա Օսմ. իրաւաբանութեան
վրայ գիրք մը հրատարակեր է, որ այս
պահուս բարձրագոյն հրամանաւ թուր-
քերէնի կը թարգմանուի:

— Մեծ հրդեհ մը ծագելով հինգ-
շաբթի առաւօտ Պոլսոյ Եննի-Գարու
հայաբնակ թաղն, գրեթէ ամբողջովին
հրոյ ճարակ ըրաւ զայն վեց ու կէս ժա-
մու մէջ: Այրած չէնքերու կարգին մէջ
է աղջկանց թաղային վարժարանը: Իսկ
եկեղեցին, մանչերու վարժարանը և
Մեսուտեմեան մասնաւոր վարժարանը,
ինչպէս և ծովեզերեայ տուները չայ-
րեցան: Հրոյ ճարակ եղած են մօտ 120
տուներ: Բոցերուն ձիրաններէն չկըր-
նալով ազատիլ, այրեցան 24 ասրեկան
Կեսարայի յղի կին մը և Ս. Առաքելոց
եկեղեցւոյն վերնատան լուսարարուհի
Անթառամ խաթուն: Հրկիզեալ տունե-
րէն միայն 20ը ապահովագրեալ են ե-
ղեր: Վեհ. Սուլթանին հրամանաւ,
հաց, ածուխ, վերմակ, և լն, բաշխուե-
ցան հրկիզեցոյ: Հրդեհին պատճառած
ընդհանուր վնասը կը հասնի 45-50 հա-
զար ոսկոյ: Տէրքոսեան ջրի ընկերու-
թիւնը կը մեղադրուի՝ ջրի ծորակները
մէկ երկու ժամ ուշ բանալուն համար:

— Գեղարուեստից վարժարանին մէջ
հապտատեալ փորագրութեան դասը
պիտի աւանդէ Փարիզու Լա Փամիլլ
հանդիսին փորագրիչ Պ. Նաբիէ, որ մի
քանի օրէն մայրաքաղաքս պիտի ժա-
մանէ:

— Եգիպտական կառավարութիւնը
վերուցեր է Եաֆայէն եկող նաւերուն
վրայ դրուած քարանթինան:

— Սպանութեան փորձ մ'եղաւ նա-
խընթաց երեկոյ՝ մայրաքաղաքիս պուլ-
կարական դործակատար Տոբթ. Վուլ-

քովիչի վրայ որ դանակի հարուածով
մը վիրաւորուեցաւ ձախ կողէն: Հարկ
եղած վիրաւորական դործողութիւնք
թէ և կատարուեցան, բայց վերքը մա-
հացու լինելով, Տոբթ. Վուլքովիչ երէկ
երեկոյ աւանդեց իւր հոգին: Ոճրա-
գործը, որ Պուլլար մ'է, երէկ գիշեր
ձերբակալուեր է:

— Ի Կրէտէ կուր կոչուած հիւան-
դութիւնն երևան ելած լինելով, 3000
հոգի բռնուեր են այս ակտէն: Կղզոյն
մէջ պաճարախտ ևս կը տիրէ ամսէ մը
ի վեր:

— Կ. Պոլսոյ քաղաքացւոց շէնքին
(Մաքսուտիյէ խան) պայմանաժամը լը-
րանալու մօտ լինելով, խանին տէրերը
պաշտօնապէս խմաց տուած են հեռագ-
րական և թղթատարական վարչութեան
թէ, պայմանաժամը լրանալէն յետոյ
կամ պէտք է խանին ամսական 60 ոսկի
վարձը 100ի բարձրացնել և կամ ան-
միջապէս պարպել շէնքը, այս վերջին
պարագային մէջ անցած իւրաքանչիւր
աւուր համար 10 ոսկի հատուցանելով:
Թղթատարական և հեռագրական վար-
չութիւնն այժմ զբաղած է այս խնդ-
րով:

— Դարամուսալի (Նիկոմիդիոյ վի-
ճակ) վաճառականներէն մի քանի ան-
ձինք՝ ծովեզերայ մօտ գտնուող պար-
տէզներէն 30 արտավար գնելով, Ֆէսի
մեծ դործարան մը շինելու մտադրու-
թիւն ունին եղեր:

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Սվաճեան նուագահանդէսը, որ տե-
ղի պիտի ունենար ամսոյս 11 երեքշաբ-
թի գիշերն Դաւադգիւղի թատրոնին մէջ,
յետաճգուած լինելով՝ տեղի պիտի ու-
նենայ յառաջիկայ երեքշաբթի գիշեր,
փետրվար 18:

Վ Ր Ի Պ Ա Կ

«Ծաղիկ»ի 16րդ թուով հրատարակ-
եալ «Ա. Զօպանեանի գրադատականը»
յօդուածին մէջ չիփթութիւն մը պա-
տահած է: «Գարուն» բանաստեղծու-
թեան մէջ, Տրդ. և Յրդ. տողերը վեր-
նալով, պիտի գրուին Տրդ. տողէն վերջ,
այսինքն «Միայն, ախոս», որ տարե-
նը» տողէն առաջ, որով ոտանաւորին
երրորդ տունը պիտի կազմուի այսպէս.

«Դու ես աշխարհս խնդացնում,
Բնութեանը կեանք տալիս,
Միայն, ախոս, որ տարենը
Մի անգամ ես հիւր գալիս...»



ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»Ի

Կ. Ա. Ի Հալէպ. — Ձեր յանձնարա-
րութեանց գումարն է 4 1/2 օսմանեան
ոսկի: Հաճեցէք փոխանակագրով մը
սոյն գումարին վճարումը հրամայել այդ
անձին, որպէս զի յանձնարարութիւնք
կատարուին:

Յ. Ս. յԱմասիա. — Մ. Շ. ի գրուա-
ծը սխալման մը արդիւնք է: Յ. Փ. ի
գրուելու տեղ՝ անոր գրուեր է: — Ժա-
մանակին ստացած եմք. կը ներկք որ
այսպէս ուշ կ'իմացնեմք: — Ձեր ինքնա-
բերարար մատուցած ծառայութիւննե-
րէն շատ շնորհակալ եմք:

Գ. Զ. ի Կիւրիւն. — Այդ խնդիր մեզ
չվերաբերիր. կարող էք ուղղակի իրենց
դիմել: «Ծաղիկ» ուղած էք, բայց
բաժանորդագիրն չէք զրկած:

Յ. Մ. յԱրաբիկիւր. — Ստացանք Մ.
Ս. է 125 դրուէ ի հաշիւ բաժանորդա-
գրութեանց:

Ն. Գ. յԱյնթապ. — Ձեր յունվ. 6ին
ղրկած 110 դրուէ ստացած եմք: Ստա-
ցանք նաև Ձեր փետրվար 9ի նամակը
ներկա կեալ փոխանակագրով:

Տ. Մ. Եւ Գ. ի Պրուսա. — Համա-
գումար 61 զրէ:

Ս. Ա. ի Խարբերդ. — Ապուռիկ յանձ-
նարարութիւն չկատարուիր: Ձեր յանձ-
նարարութեան գումարն է 225 դրուէ:
Հաճեցէք շրկել կանխու: Բարենիշերը
ձեր ուղած ձեռով չեն կրնար շինուիլ:

Տ. Ս. ի Զմիւռնիա. — Հաճեցէք զր-
կել շարունակութիւնը:

ՍԻՄՈՆ ԳԱՐՍԻՄԱՃԵԱՆ. — Նոր բա-

ռագիրք հայերէն լեզուի: Հրատարա-
կուեցաւ 36—37 երորդ թերթին: Բաժ-
նեզինն 15 դահկան: Բաժանորդագը-
րութեան համար դիմել առ հեղինակն,
Ի Կ. Պոլիս, Էսկի-Զապիթէ, Պէրպէր-
եան տպարան:

Բ Ժ Ի Շ Կ Կ Ո Ւ Զ Ո Ւ Ի

Ծովեզերեայ դաւառէ մը ճար-
տար բժիշկ մը կը փնտռուի: Պայ-
մաններն իմանալու համար դիմել
«Ծաղիկ»ի խմբագրատունը:

Ա Ր Ժ Է Գ Դ Ր Ա Մ Ո Յ

Օսմ. իրան 100 զրէ. էն

Մէճիտիյէ	108	43	Վ. Եջնոց	102	20
Քառորդ մէճիտ	107	40	Բուսիդի բօլ	89	25
Մանր մէճիտ	102	40	Նաբուլէն	87	43
Մէթալիք	98	20	Դրիմից	51	40
Հինգնոց	102		Անգլ. լիւր	110	

Մանէթ թղթագրամ 9 20

Գոնսոյիսէ	20	31	Բուս. երկ.	72	3/4
Թահլիլ. Օսմ.	77	46	Թապիկէ	20	

48)

ԴԵՅՔՍԵՐ

ՎԵՆԵՏԿՈՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ Դ.

ՏԵՍԻԼ Ա.

ԲՈՐԱ. — Մօտեցէ՛ք, վաճառական, ըսելիք բան մ'ունի՞ք:

ԱՆՔՈՆ. — Քիչ բան: Ես զինեալ եմ և լաւ պատրաստուած եմ: Տուէ՛ք ինձ ձեր ձեռքը, Պասանիօ, մնաք բարեաւ: Չվշտակիրիք երբէք որ այս աղէտ ձեր պատճառաւ եկաւ ինձ, զի բաղդն այս մասին սովորականէն աւելի գլխած եղաւ ինձ: Իւր սովորութիւնն է թողուլ որ ապրի թշուառն՝ իւր հարստութենէ վերջ խոռոչեալ աչօք և խորշոմեալ ճակտով տառապելու համար անհատնում աղքատութեան մէջ: Բաղդը կը փրկէ զիս այդ օրինակ շուառութեան մը յամրաքայլ պատուհասէն: Ձեր պարկեշտ ագէիւ կնոջ յարգանքներս մատուցէ՛ք. պատմեցէ՛ք իրեն Անթօնիօի անհետացման բոլոր պարագայները. ըսէ՛ք նմա թէ որչափ զձեզ կը սիրէի, լաւ խօսեցէ՛ք իմ մասին մահուընէս վերջ, և ամէն բան պատմելէ վերջ, թո՛ղ ինքը վճռէ թէ Պասանիօ ճշմարիտ բարեկամ մը չունի՞ր: Մի՛ ցուիք որ բարեկամ մը կը կորսնցնէք, և այդ բարեկամը չափաւ ցաւի ձեր պարտքը վճարելուն համար. թող Հրեայն բաւական խոր կտրէ, յայնժամ բոլոր սրտով վըճարած պիտի լինիմ ձեր պարտքը:

ԿԱՏԱ. — Անթօնիօ, ամուսնացած եմ կնոջ մը հետ որ կենացս չափ սիրելի է ինձ. բայց կեանքը, կինս, բոլոր աշխարհ քու կեանքէդ աւելի սիրելի չեն ինձ: Ամէնը կուտամ, ամէնը կը զոհեմ զքեզ փրկելու համար այս սատանայէն:

ԲՈՐԱ. — Եթէ կինդ ներկայ լինէր և լսէր ձեր առաջարկութիւնը, շատ շնորհակալ չափաւ լինէր անշուշտ:

ԿԱՏԱ. — Կին մը ունիմ զոր կը սիրեմ անկեղծ սիրով, բայց երանի թէ երկնքի մէջ լինէր նա այս վայրկեանս և կարենար ի ձեռն երկնային գորութեան փոխել այս վայրագ Հրէին սիրտը:

ՆԷՐԻ. — Լաւ է որ այդ բարեմաղթութիւնը կ'ընէք նորա բացակայութեան միջոցին, եթէ ոչ այդպիսի իղձ մը պիտի խանգարէր ձեր տան խաղաղութիւնը:

ՇԱՅԼ. — (մեկուսի) Ահաւասիկ քրիստոնեայ ամուսիններն: Աղջիկ մը ունիմ, աւելի կ'ուզէի որ Բարաբբայի ցեղէն միոյն հետ ամուսնանար քան թէ քրիստոնէի մը հետ: (բարձր) Ժամանակ կը կորսնցնենք, կ'աղաչեմ, յայտնեցէ՛ք ձեր վճիռը:

ԲՈՐԱ. — Լիտր մը միս վաճառականին մարմնէն քուկդ է. օրէնքը զայն քեզ կուտայ և դատարանը կը վաւերացնէ:

ՇԱՅԼ. — Ո՞վ ամենագէտ դատաւոր, ահա վճիռ մը: Օն, պատրաստուէ՛:

ԲՈՐԱ. — Կեցիր վայրկեան մը. քանի մը բաներ ալ կայ ըսելիք: Այս մուրհակը քեզ չտար ոչ մի կաթիլ արեան. ճիշդ բաւերն ասոնք են. լիտր մը միս, Առ ինչ որ կուտայ քեզ մուրհակդ, ա՛ռ քու լիտր մը միսդ, բայց եթէ երբէք կարած ժամանակդ կաթիլ մը քըրիստոնէի արիւն հոսի, երկիրներդ և ստացուածքդ, վենետիկ օրինօք, պիտի դրաւուին վենետիկեան կառավարութեան կողմէ:

ԿԱՏԱ. — Ո՞վ արդար դատաւոր, կը լսես, Հրեայ, ո՞վ բանիբուն դատաւոր:

ՇԱՅԼ. — Միթէ կա՞յ այդպիսի օրէնք:

ԲՈՐԱ. — Դու ինքդ տեսիր օրինաւ: Գիրքը. քանի որ արդարութիւն կը պահանջես, փափաքածէ՛ք աւելին պիտի ընդունիս:

ԿԱՏԱ. — Ո՞վ բանիբուն դատաւոր, ահա՛նք դիր, Հրեայ, իմաստուն, արդար դատաւոր:

ՇԱՅԼ. — Ուրեմն կ'ընդունիմ ձեր առաջարկութիւնը. վճարեցէ՛ք ինձ եռապատիկն և թողէ՛ք երթայ քրիստոնեայն:

ՊԱՍ. — Ահա՛ դրամը:

ԲՈՐԱ. — Սպասեցէ՛ք. Հրեայն ամէն արդարութիւն պիտի ստանայ, սպասեցէ՛ք, մի աճապարէ՛ք: Նա պատժական օրինաց գործադրութիւնը պիտի ընդունի:

ԿԱՏԱ. — Ո՛հ, Հրեայ, արդար դատաւոր մը, իմաստուն դատաւոր մը:

ԲՈՐԱ. — Պատրաստուէ՛ ուրեմն կըտրել մարմինն. արիւն մի՛ հոսեցներ և մէկ լիտրէն ոչ աւելի ոչ պակաս պէտք է կտրել: Եթէ մէկ լիտրէն աւելի կամ պակաս կտրես, թէ և միայն այնչափ որ կտրած միդ ծանրութիւնը ցորենի հատիկի մը քսաներորդ մասին չափ աւելնայ կամ պակսի, եթէ նոյն իսկ կշիռքը մագի չափ միայն մէկ կողմը հակի, մահով պիտի պատժուիս և տէրութիւնը պիտի դրաւէ ստացուածքդ:

ԿԱՏԱ. — Երկրորդ Դանիէլ մը, Հըրեայ, Դանիէլ մը: Հրեայ հեթանոս, ինկա՞ր ծուղակը:

ԲՈՐԱ. — Ինչո՞ւ կ'սպասես, Հրեայ, ա՛ռ տուգանքդ:

ՇԱՅԼ. — Տուէ՛ք ինձ փոխ տուած գումարս և թողէ՛ք երթամ:

ՊԱՍ. — Դրամդ պատրաստ է հոս, ահաւասիկ:

ԲՈՐԱ. — Նա ինքն արդէն դրամը մերժեց առաջի ատենի. նա արդարութեան

թիւն պիտի ընդունի պարզապէս և մուրհակին մէջ նշանակուածը:

ԿԱՏԱ. — Դանիէլ մը, դեռ կ'ըսեմ քեզ, երկրորդ Դանիէլ մը. շնորհակալ եմ որ այս բառը ինձ սովորեցուցիր, Հրեայ:

ՇԱՅԼ. — Միթէ տուած դրամս ալ չեմ կրնար ետ առնուլ:

ԲՈՐԱ. — Դու միայն որոշեալ տուգանքը կ'ստանաս:

ՇԱՅԼ. — Է՛հ, սատանան թո՛ղ փրկէ զինք, ալ չեմ կրնար հակաճառել:

ԲՈՐԱ. — Կեցիր, Հրեայ, օրէնքն ուրիշ պահանջ մ'ալ ունի քեզմէ: Վենետիկ օրինօք հաստատուած է որ եթէ ապացուցուի թէ օտարական մը անուղղակի կամ ուղղակի միջոցներով փորձէ վտանգել քաղաքացւոյ մը կեանքը, ստացուածոցը մէկ կէսը կը պատկանի այն մարդուն որոյ դէմ կը դաւէ, իսկ միւս կէսը կառավարութեան մասնաւոր արկղին, և դաւողի կեանքը կախում ունի դէսի գլխութենէն, որ կրնայ միայն ներել կամ պատժել: Այս պարագային մէջ կը գտնուիս ահա՛: Ձի ահաներեւ եղաւ այս դատաւարութենէն որ անուղղակի և ուղղակի կերպով վտանգել կ'ուզէիր քու պարտապանի կեանքը: Հեռեալ արարի երկարութիւն այն պատժին զոր քիչ առաջ յիշեցի: Ծունկի եկուր ուրեմն և հայցէ՛ գլխին գլխութիւնը:

ԿԱՏԱ. — Խնդրէ՛ որ զքեզ թողուն ինքզինքդ անձամբ կախուլ: Բայց քանի որ բոլոր հարստութիւնդ յարքունիս պիտի դրաւուի, պարանի դրամանգամ չափաւ մնայ քեզ. ուստի դարձեալ կառավարութեան ծախքով պիտի կախուիս:

ԴՈՒՄԱ. — Որպէս զի տեսնես թէ մեր զգացումները որքա՞ն կը տարբերին քու զգացումներէն, քեզ կը շնորհեմ կեանքդ՝ խնդրելէ՛դ առաջ. գալով ստացուածոցդ, կէսը Անթօնիօ կը պատկանի և միւս կէսը կառավարութեան. բայց եթէ զղջաս, թերեւս միայն տուգանքով ազատիս:

ԲՈՐԱ. — Այո՛, կառավարութեան նըկատմամբ, այլ ոչ Անթօնիօի:

ՇԱՅԼ. — Է՛հ, առէ՛ք կեանքս և ամէն ինչ, բան մի՛ խնայէ՛ք: Տունս կ'առնէք, երբ ապրուստս կ'առնէք, կեանքս կ'առնուք, երբ կը զրկէք զիս այն միջոցներէն որոցմով կ'ապրէի:

ԲՈՐԱ. — Ի՞նչ շնորհ կրնաս ընել իրեն, Անթօնիօ:

ԿԱՏԱ. — Ձրի չունան մը, ոչ աւելի բան, ի սէր Աստուծոյ:

ԱՆՔ. — Կ'աղաչեմ՝ դուքսն ու դատարանն որ տուգանքն իւր հարստութեան կիսոյն իջուցուի. միւս կիսոյն գործածութիւնը ինձ կը բաւէ, իւր

մահուանէ վերջ տալու համար նորերս աղջիկը առեանգող երիտասարդին. Այս զինչով թեանս փոխարէն երկու բան կը պահանջեմ. առաջինը՝ շուտով քրիստոնեայ ըլլայ. երկրորդը՝ հիմայ առաջի ատենի օրինական թուղթ մը ստորագրէ որով իւր մահէն յետոյ բոլոր ունեցածը պիտի ժառանգեն փեսան՝ Լորէնցո և աղջիկը:

Դուստ. — Այդպէս պիտի ընէ, եթէ ոչ յետոս կ'առնում քիչ մ'առաջ իրեն ըրած շնորհս:

Բորս. — Է՛հ, գո՛հ ես, Հրեայ. ի՞նչ կ'ըսես:

Շալլ. — Գոհ եմ:

Բորս. — Քարտուղա՛ր, գրեցէք թուղթը որ ստորագրէ:

Շալլ. — Խնդրեմ հրաման տուէք որ երթամ. գէշութիւն մը կ'զգամ. թուղթը զրկեցէք ինձ, կ'ստորագրեմ:

Դուստ. — Գնա՛, բայց խօսքիդ վրայ կեցիր:

Կրաս. — Երբ մկրտուիս, երկու կընքահայր պիտի առնես. եթէ ես դատաւոր լինէի, տասն հատ աւելի պիտի ունենայիր զքեզ կախաղան տանելու համար և ոչ թէ աւագան. (Շալլօք կ'ելնէ)

Դուստ. — Խնդրեմ, Պարոն, ինձ հետ եկէք ճաշելու:

Բորս. — Կր խնդրեմ խոնարհաբար որ Ձերդ Մեծապայծառութիւն ինձ ներէ. պէտք է որ այս երեկոյ ի Բատովա գտնուիմ և ուրեմն հարկ է որ անմիջապէս մեկնիմ:

Դուստ. — Կը ցաւիմ որ մնալու ժամանակ չունիք. — Անթօնիօ, վարձատրեցէք երիտասարդը, զի, իմ կարծեօք, մեծապէս երախտապարտ էք նմա: (Կելնէ դուքսն հետեւորդօք):

Պաս. — Շատազնիւ Տէր, ձեր իմաստութեան շնորհիւ ես և բարեկամս, զերծանք այսօր անագորոյն պատուհասէ մը. ահա՛ այս երեք հազար տուրքաթն որ Հրէին էր, ձեզ կը նուիրենք ձեր մեծայարգ ծառայութեանց փոխարէն:

Անթ. — Եւ մանաւանդ պիտի մնանք ձեզ յաւէտ շնորհապարտ և անձնանուէր:

Բորս. — Նա որ իւր մասին գոհ է, նա՛ լաւ վճարուած է. ես գոհ եմ որ կարողացայ ազատել ձեզ. հետեւապէս լաւ վճարուած կը համարիմ զիս: Երբէք վարձկան հոգի մը ունեցած չեմ: Կը խնդրեմ որ ճանաչէք զիս, երբ ուրիշ անգամ մ'ալ ինձ հանդիպիք: Լաւութիւն կը մաղթեմ ձեզ և հրաժեշտ կ'առնում:

Պաս. — Սիրելի Տէր, ներեցէք ինձ կրկին և կրկին խնդրել որ մեզմէ բան մը ընդունիք իբր յիշատակ, եթէ ոչ իբր վարձք: Կ'աղաչեմ երկու բան ինձ շնոր-

հեցէք, այսինքն չմերժել և չնեղանալ:

Բորս. — Շատ կ'ստիպեմ զիս, ուրեմն հաւանելու եմ: Անթօնիօ, դուք ձեր ձեռնոցը տուէք ինձ, իբր ձեր յիշատակը պիտի կրեմ զայն, և դուք Պասանիօ, ինձ տուէք իբրեւ յիշատակ ձեր այդ մատանին, և դուք իմ սիրոյս համար չէք կրնար ինձ մերժել:

Պաս. — Այս մատանին, Ազնիւ Տէր, աւա՛ղ... ոչ ինչ բան մ'է այս. կ'ամչնամ ձեզ տալու զայն:

Բորս. — Այս մատանիէն աւելի բան չեմ ուզեր, և պէտք է ըսեմ որ քմահաճոյքս է այս:

Պաս. — Այս մատանին իւր գինէն աւելի կ'արժէ ինձ համար: Վենետիկոյ ամենագեղեցիկ մատանին գտնեմ և տամ ձեզ, իսկ ասոր համար ներողութիւն կը խնդրեմ:

Բորս. — Կը տեսնեմ որ, Տէր, շատ առատաձեռն էք ձեր նուէրներուն մէջ, դուք ինձ նախ սովորեցուցիք խնդրել, և այժմ ինձ կ'ուսուցանէք թէ ինչպէս պէտք է պատասխանել մուրացկին:

Պաս. — Ազնուասիրտ Տէր, այս մատանին իմ կինը տուած է ինձ, և մատս դրած պահուն, երդնուլ տուաւ ինձ որ ոչ ծախեմ զայն, ոչ ուրիշին տամ և ոչ ալ կորսնցնեմ:

Բորս. — Ահա՛ այդ փախստի միջոցներով է որ շատեր կը մերժեն այլոց նուէրներ տալ. եթէ ձեր կինն խելագար մը չէ, եթէ գիտնայ թէ որչա՞փ կ'արժեմ այս մատանին, յաւիտեան ձեզ հետ չպիտի թշնամանայ՝ զայն ինձ տալու համար: Բայց դուք գիտէք, մնաք բարով: (Կ'ելնեն Բորիսա և Նէրիսա)

Անթ. — Սիրելի Պասանիօ, տուր իրեն մատանին, թո՛ղ իւր մատուցած ծառայութիւնը և իմ բարեկամութիւն յաղթեն կնոջդ հրամանին:

Պաս. — Գնա՛, Կրասիանօ, վազէ ու ձեռք ձգէ զինք, տուր իրեն այս մատանին, և եթէ կրնաս, բե՛ր զինքը Անթօնիօի տունը: Շուտ, փութփութ կ'ելնէ Կրասիանօ, մենք ալ ձեր տունն երթանք և վաղը շատ կանուխ դէպի Պէլմօն պիտի թռչինք երկուքս ալ: Եկուր, Անթօնիօ:

ՏԵՍԻՒԼ Բ.

ՎԵՆԵՏԻԱ—ՓՈՂՈՅ ՄԸ

(Մտնէ Բորիսա և Նէրիսա)

Բորս. — Գտիր Հրէին տունը, տուր իրեն այս թուղթը որ ստորագրէ: Այս գիշեր ճամբայ պիտի ելնենք և մեր ամուսիններէն օր մ'առաջ տուն պիտի հասնինք: Այս թուղթ շատ հաճելի պիտի լինի Լորէնցօի համար:

(Մտնէ Կրասիանօ)

Կրաս. — Գեղեցիկ պարոնս, շատ

բաղդաւոր եմ ձձեզ գտնելու համար. Տէր Պասանիօ ընդ երկար խորհելէ վերջ ձեզ կը զրկէ մատանին և ձձեզ ճաշի կը հրաւիրէ:

Բորս. — Ձեմ կրնար գալ, բայց մատանին շատ շնորհակալութեամբ կ'ընդունիմ, և այսպէս ըսէք իրեն, կ'աղաչեմ: Կը խնդրեմ նոյնպէս որ այս երիտասարդին ցոյց տաք Շալլօքի տունը:

Կրաս. — Այո՛, ինչո՞ւ չէ:

Նէրիսա. — (Բորիսային) Պարոն, կ'ուզեմ ձեզ հետ խօսիլ: — (Մեկուսի) տեսնեմ ամուսնոյս մատանին կրնամ առնուլ իրմէ, զոր միշտ պահելու համար երգուընցուցի զինքն:

Բորս. — Կրնաս, կը վստահացնեմ զքեզ: Ամէն երգում կ'ընեն մեզ թէ այր մարդկանց կ'ընծայեն իրենց մատանիները, բայց մենք կը պնդենք որ կը խաբեն զմեզ, Շուտ գնա այժմ, գիտես թէ ո՞ր կ'սպասեմ քեզ:

Նէրիսա (Կրասիանօին). — Եկէք, բարի Պարոնս. ցոյց տուէք ինձ Հրէին տունը: (Կ'ելնեն)

Թարգմ. Ա. ՀԱՄԱՐԱՊԳԱՅԹԱՆ
(Շարունակելի)

ՊԻՏԱՆԻ ԽՐԱՏՆԵՐ

Մեդիամոմի առաջ. — Օ. սը-Գօլօնեը-ով թրջեցէք բժաւորեալ մասն և մատներով շփեցէք թեթեօրէն. այս կերպով արատները փութով կ'անհետին:

Մեհաֆեսայ կերպասուց լաւ նանչնալ. — Ծալլել կերպասն և պինդ մը ճնշել ծալքին վրայ: Եթէ անմիջապէս բանալով ծալքի հետք մը չմնայ, նըշան է թէ մետաքսն ընտիր տեսակ է:

Գորգերը մաքրել. — Ծեծեցէ՛ք ու խոզանակեցէ՛ք ձեր գորգերն և վրան ցանեցէք թրջոց դրուած թէյի տերեւներ. մեղմիւ աւելեցէք սէզլի աւելով: — Հին օթոցները մաքրելու համար ջուրի մէջ օճառախոտ (saponaire) խաշեցէք և թողէք որ պաղի: Գորգերը լաւ մը ծեծելէ ու խոզանակելէ վերջ սեղանի մը վրայ փռեցէք, և՛ առանց շփելու՝ լաւ մը լուացէք պատրաստուած ջուրին մէջ առատօրէն թաթխուած սպունգով: Յետոյ օդին մէջ կախեցէք որ չորնան:

Խաղաղ (Gargarisme). — Բերնի և լնդեր դժուարաբոյժ կեղիք ունեցող անձինք թող գործածեն հետեւեալ նիւթերով պատրաստելի սա բուժիչ սոսորդաջուրն (կարկարայ).

Լեղ (շապ) 16 կրամ

Բնադան (Tanin) 4 »

Սպիտակ մեղր 36 »

Վարդի թորեալ ջուր 64 »

Թարգ. Թ. ԼԱՊԷՐՆԵՃԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՅԵՐՈՒ ՆԻԳՕԼԱ ԵՒ ԲՕԼ ՍՄԻՐՆՕՅԵ ԵՂԲԱՐՑ

Ղալաթիա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգօլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատունս՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վաճառելի թէյերու տեսակներն եւ գիններն ի ստորեւ նշանակեալ, կը ծանուցանէ ի գիտութիւն յԱրգոյ հասարակութեան:

Թիւ 1. Լիանսին	Ֆունթ 32	Դահեկան
» 2. Չինական վարդ	» 30	»
» 3. Պուքէ Էմբէրիալ	» 26	»
» 4. Ֆուչէֆու	» 20	»
» 5. Տնական թէյ	» 16	»
» 6. Խնայողական տեսակը	» 12	»

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս եւ մէկ չորրորդ ֆունթնոց (133 տրամ) ծրարներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կապարեայ թղթով պատած, իրենց վըրայ կը կրեն վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն: Սոյն թէյերը չաւրուելու համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգելուած է նոյն իսկ ծխելն:

ԶԴՈՒՇԱՆԱԼ ԿԵՂՇԵՐԷՆ

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրր նմոյշ գնել վաճառատունէս փոքր ինչ եւ փորձել: Վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա աշխարհածանօթ է արգէն:

Սոյն թէյեր կը վաճառին նաեւ ի Բերա, Թիւնելի դիմաց Ֆրաթէ վաճառատունը, Պոլիս Պահճէ գաբու Շէյիսիւլիսլամ խան Թիւ 2 Միւսիւ Նիքիթիէ Էրպէնկին մթերանոցը, Օրթագիւղ Թաշ Նէրտիւսյան փողոց Թիւ 5 Պ. Գրիգոր Միսկեանի գեղարանը, Իւսկիւտար Թաշ Տէմիրճիլէր փողոց Թիւ 25 Միւսիւ Ա. քէստօրիտիսին գեղարանը եւ Գատըգիւղ Նպարավաճառ Բարաթանասիօին մթերանոցը Թիւ 19:

(13—18)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԽԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Պանֆէ—Գաբու, ձէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10

Զմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գտնուին Չինէ եւ Ճափայէ ուղղակի հասած նոր բերք՝ զանազան տեսակ գերընտիր եւ ազնիւ ու անուշադոյր ամէն ճաշակի յարմար: — Ծաբոնական, Չինական եւ Հնդկական այլ եւ այլ մեծ ու թեւամբ եւ ձեւերով թէյի տուփեր, գեղակերտ եւ նկարազարդ Յաճախորդաց — գոհացում տալու համար բնաւ ջանք չլինայուիր: — Յանձնարարութիւնք կը կատարուին փութով եւ ճշգրտութեամբ: — Գինները որոշ եւ խիստ չափաւոր: — Չիք սակարկութիւն: 2—4

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ

133րդ ՎԻՃԱԿԱՀԱՆ ՈՒԹԻԻՆԸ

Տեղի պիտի ունենայ յառաջիկայ մարտի 19 ին: Մեծ պարգեւն է

600,000 ՖՐԱՆԿ ԿԱՄ **30,000** ԳԱՂ. ՈՍԿԻ

Պիտի շահին 600 անձինք: Ամենէն փոքր պարգեւն է 400 ֆրանք: Բաղդատումք վաւերացեալ են Օսմանեան աւետարական նախարարութեանէն:

Գին քաղղատումսի 7 $\frac{1}{2}$ դրոշ:

Գաւառներէն ստանալ ուղղորդները պէտք է դիմեն ԵԱՂԻԿԻ Յանձնակատարութեան Գրասենեկին: Փօստի ծախուց համար պէտք է ղրկել մէկ ղրուշ աւելի:

Շահող թուոց ՃԻՇԴ ցուցակը կը հրատարակուի ԵԱՂԻԿԻ մէջ:

ԿԻՒՆ ՏՕՂՏՈՒ

Սուլթան համամ, Ֆնտգլեան խան, 41
Եւրոպայէն նոր բերուած հետեւեալ ապրանք կը վաճառուին 12 դրուշ 30 փարայի:

1 Գծաւոր բրդեայ արանց փանելա:
3 Զոյգ կապարագոյն բրդեայ արանց փանելա:

1 Հատ գունաւոր բրդեայ կանանց փանելա:

2 Զոյգ կապարագոյն բրդեայ կանանց գուլպայ:

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրու թեամբ ներքնաշապիկ:

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրու թեամբ ներքնավարտիք:

1 Անգղ. կտաւէ օձիքով ու թեւնոցով արանց շապիկ:

3 Արանց շապիկի նորածեւ ճերմակ կուրծք:

6 Արանց շապիկի նորածեւ օձիք:

3 Զոյգ քթանէ շապիկի թեւնոց:

1 » մէջը փանելայով ձեռնոց:

1 Հատ գունաւոր արանց փանելայ վարտիք:

1 Հատ բրդեայ կանանց ուսնոց:

1 » բուրդէ հիւսուած կանանց ծածկոյթ:

1 Հատ գունաւոր բրդեայ տղոց չըր-ջազգեստ:

1 Հատ բրդեայ տղոց բաճկոնակ:

2 » ամենալաւ տեսակէն մետաքսեայ փողկապ:

12 Հատ գունաւոր կամ ճերմակ քթան թաշկինակ:

6 Հատ գունաւոր երեսի սրբիչ:

4 » կարմիր գծաւոր խաւրու:

3 » շատ մեծ ոտքի խաւրու:

4 Հատ ծայրերը գունաւոր ծաղկենկար քթան խաւրու:

3 Հատ ծայրերը շինուած լաւ քթան խաւրու:

6 Հատ գունաւոր քթան՝ սրբիչ:

1 » մետաքս կամ բուրդ կանանց լասթիքի փանելայ:

1 Զոյգ շատ երկայն անգղ. շղարչէ վարագոյր:

1 Հատ մետաքս տուփի մէջ 2 լաւանտա, 1 օճառ, 1 օտը քօլօնք:

6 Հատ շուրջը գունաւոր կանանց քթան թաշկինակ:

4 Հատ լաւ տեսակ արանց քթան թաշկինակ:

6 Հատ շուրջը անթիքայով ճերմակ կանանց թաշկինակ:

6 Ծաղկենկար տամասէ անձեռոց:

1 Հատ ծոպերը շինուած 8 հոգինոց սեղանի ծածկոց:

6 Անգղ. արծաթէ ապուրի դգալ:

3 Հատ դանակ եւ 3 պատառաքաղ:

2 » գոյնզգոյն լամպի փանելայ:

2 Զոյգ գծաւոր բրդեայ կանանց գուլպայ:

3 Հատ Լիոնի մետաքս գունաւոր թաշկինակ:

2 Հատ շատ մեծ քթանէ խաւրու:

2 » լաւ տեսակ գաղ. մետաքս թաշկինակ:

6 Հատ Անգղ. արծաթէ սուրճի կամ անուշի դգալ:

3 Բրդեայ լասթիքի տղոց գուլպայ: Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Մաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակին:

6—12

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԱՇՆԱԿԱՑ
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակցարդար էՌԱՌԻ
հռչակաւոր գործատան

Գնումն եւ վաճառումն
Փոխանակութիւն ձին դաշնակց հետ
Կը վաճառուին ամէն տեսակ դաշ-
նակներ ամսական վճարմամբ և մասնա-
ւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործա-
րաններէն Քլէնի դաշնակները, խիստ
դիւրամատչելի գիններով:
Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն
գործարանաց դաշնակներէն կը բերուին:

Վարձու նոր դաշնակներ չափաւոր
գիններով:

Բաժանորդագրութիւն դաշնակաց
յարգարման (accord):

Դաշնակաց նորոգութիւն, գաղղիական
ընտիր նիւթեղէններով:

ՀՐԱՆԱՆԳ դաշնակները չհինցնելու
և լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Գաւառներէ եղած յանձնարարու-
թիւնք ամենայն խնամով և փութով կը
կատարուին:

Անմրցելի աժանութիւն

Աւելի մանրամասնութեանց համար
դիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա
Սարայի դիմաց, Խրիսթաքի խան,
Թիւ 10: (18—30)


ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

✻ ԿԱՍ ✻

ԱՌԱՋՆՈՐԴ

ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ ԱՆՁԱՆՑ

Հասցեակի
Ս. ՔԱԼԵՔԱՆՆ



Ստորագրող
Ս. ՔԱԼԵՔԱՆՆ

ՏՊԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԵԱՆ

Գին 5 Լր.

Ֆրանսայի բժշկական համալսարանէն՝ համ-
բաւաւոր Տօր. Գլէմանի տոյն հետաքրքրաշարժ
եւ քննիր երկասիրութիւն՝ հայերէն մաքուր
աշխարհաբարի ճարգմանուած, բարոյական
մտղմանիւ դասերով աղարեւ ծանկագին ծա-
ւայութիւն մը պիտի մատուցանէ այն ամէն ան-
ժանց, որ ամուսնական խորհրդաւոր կենաց
մէջ մանկելու մտադիր են եւ կամ մշտն, նաեւ զի-
տական նոր ճշմարտութիւններով պիտի ցուցնէ
Սէ՛ ապագայ ամուսինը ինչ պարսին գիտաւ
իրենց ամուսնութեան նախընթաց օրը, եւ այ-
նուհետեւ. նաեւ՝ Սէ՛ այր են այն անմիջական
դարմաններն, հարկաւոր՝ կատարեալէն բո-
ժեղու ամուսնական հակառողջապահիկ զեղծ-
մանց ճխուր եւ ցաւալի հետեւանքները:
Կեդրոնացեղին է Զարդարեան գրաստըն, կը
գտնուի նաեւ բոլոր Հայ գրաւաճառաց քով:

ԱՐՏՈՒՍԱՏԻՐ Ա. ՍԱԲԱՑԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Եսկի-Ջալապիէ փողոց, քիւ 64

ՅԱՆԷԼՍ. ԱՊՐԱՆԱՑ ՀԻՒՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՆՍԼԱՆԵԱՆ ԵՂԱՐՑ

Ի Մահմուտ փաշա, Բիւրքեի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է
Ի Պահչէ—Գաբու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօնափիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ Թէ՛ փոքր քա-
նակութեամբ՝ արանց, կանանց
և տղայոց համար՝ անխառն
րրդէ, մանածէ, ևայլն, ուզ-
ուած թանձրութեամբ և ուզ-
ուած չափով յանձնարարու-
թիւնք կ'ընդունուին ու պատ-
րաստ կը ծախուին ֆանէլա
չապիկներ, վարտիքներ, մի-
սոցուններ, ևայլն: Ապ-
րանքները կը մրցին եւրոպա-
կաններուն հետ Թէ՛ աժանու-
թեամբ, Թէ՛ դիմացկունու-
թեամբ և Թէ՛ իրենց նուրբ
ճաշակով: Յաճախորդք ամէն
կերպիւ գոհ պիտի մնան:

16—24

Մոշրատեան Մկրտիչ եւ Յովհաննէս եղբայրք փաճառատունը

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալանա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բերդէմպէ բազար,

Մահմուտիյէ—Ճատտէսի, Թիւ 70 եւ 59:

Անգղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատ-
րաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ուսական կախափաղաղիք (առմա քիլի-
տի), հիւսան (տիւկէթ) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ
ամաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան
գործիներ, ևայլն, ևայլն, ամենքն ալ շատ աժան գներով: Ընկերութեանս մե-
քենագործն դիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:
Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք չուտ և կանո-
նաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով եւրոպայէ բե-
րել կուտանք և ուզուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՂԱՐՑ

14—24

70, Եօրկանճըլար ճատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ԲԱՂԵՑԷ՛Ր

ՀԱՐՍՏԱՆԱԼՈՒ ՄԻԱԿ ՄԻՋՈՑ

ԱՃԱՊԱՐԵՑԷ՛Ր ՓՈՐՁԵԼ ԶԵՐ ԲԱՂԴԷ, ԵԹԷ ԿՈՒՋԷ՛Ր ՇԱՀԻԼ
30.000 ԳԱՂ. ՈՍԿԻ ԿԱՄ

600,000 ՖՐԱՆԿ

Միայն 7 1/2 դրոշ

Արեւելեան երկ. 133րդ. վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ մարտ
19ին: 600 անձինք պիտի չաշին: Գաւառներէն վիճակահանութեան մասնակցիլ
փափաքողք պարտին զրկել տոմարի գինն 7 1/2 դրոշ, և փոստի ծախուծ համար
40 փարա աւելի, նամակադրօշմ ևս կ'ընդունիմք:

در علیاده غلطه جلیاتی و اندریا با تقاضای مدخره

Ա. Տնօրէնութիւն «Ճիւղանի և Անտրիա» դրամատան:

Կալաթա, Բարա քէօյ, Թիւ 23. Կ. Պոլիս